ՀՃԺԿ
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ՀՐԱՀԱՆԳ
# ԱՎԱԳ ՅԵՎ ՇԱՐՔԱՅԻՆ ՍԼԱՔԱՎԱՐՆԵՐԻ

656.2
Հ-99

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԹԻՖԼԻՍ
1935

4 3 2013

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՑԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼ ԻՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԻՍ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ ՀՐԱՀԱՆԳԸ

ՀՐԱՀԱՆԳԸ ՏՐՎԱԾ Է

| Ազգանունը | Աշխատանքի տեղը | Տացքի ժամանակը |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

24 SEP 2010

ՀՃԺԿ
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

656.2 ԱՎ
Հ-99
1008
38566
3978

# ՀՐԱՀԱՆԳ ԱՎԱԳ ՅԵՎ ՇԱՐՔԱՅԻՆ ՍԼԱՔԱՎԱՐՆԵՐԻ

| Ե / 593 | Ներկա հրահանգը պետք է մտցվի «Ցերկաթուղային գործակալներին ձեռնարկներով մատակարարելու կանոններում» (Բր. № 0/198) ըստ կարգի 417-ա համարի տակ։ |
|---|---|

ԼՇԿ—1

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՑԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
1935

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библ.
ԹԻՖԼԻՍ
ՀՍԽՀ-ССР
ИМ. А. МЯСНИКЯН
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

24.449

Խմբագիր՝ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
Թողարկիչ՝ Ֆ. ՄԻՐԿՈՎԻՉ
Հանձնված է տպագրության 8/VII
Ստորագրված է տպելու 27/VII 1935 թ.
Պատվեր № 1579.
Տիրաժ 1000
Գլավլիտ A—1346

Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան [illegible] տպարան

«Զարյա Վոստոկայի» հրատարակչություն

Հաստատում եմ.
Շահագործման Կենտրոնական Կառավարչության պետի տեղակալ՝
Արճոյդով
9 փետրվարի 1935 թ.

# ՀՐԱՀԱՆԳ

## ԱՎԱԳ ՅԵՎ ՇԱՐՔԱՅԻՆ ՍԼԱՔԱՎԱՐՆԵՐԻՆ

*(1932 թ. փետրվարի 6-ին բր. և / 294 ՑԴ-ի հաստատված ավագ յեվ շարքային սլաքավարների հրահանգի վերաբերմամբ*

## 1. ՍԼԱՔԱՎԱՐՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. Շարքային սլաքավարը նշանակվում է.

ա) Սլաքների ժամանակին և կանոնավոր ուղեփոխման և սպասարկման համար գնացքները ընդունելիս, անցկացնելիս և ուղարկելիս և մանևրային աշխատանքի ժամանակ.

բ) Սլաքային ուղեփոխները մաքրությամբ և սարքին պահելու համար.

գ) Յուրաքանչյուր գծի ծայրի սյունիկների սահմաններում շարժական կազմի սարքվածքին հսկելու համար (սլաքավարի կողմից սպասարկվող շրջանում)։

դ) Սլաքային ցուցիչների և կայարանային ազդանշանների ժամանակին լուսավորելու համար։

§ 2. Գնացքների ընդունման, անցկացման և ուղարկման, ինչպես նաև մանևրային մեծ աշխատանքով, կայարաններում շարքային սլաքավարների աշխատանքին հսկելու և հրահանգելու համար նշանակվում են ավագ սլաքավարներ։

## 2. ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՎՈՐՈՆՑ ՊԵՏՔ Է ԲԱՎԱՐԱՐԵՆ ՍԼԱՔԱՎԱՐՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԻՆ ՆՇԱՆԱԿՎՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

§ 3. Սլաքավարի պաշտոնին նշանակվող աշխատավորը պետք է բավարարե հետևյալ պայմաններին.

ա) 18 տարեկանից վոչ պակաս.

բ) Ֆիզիքական պակասություններ չունենալ, վորոնք կարող են ազդել սլաքավարի պարտավորությունները կատարելուն (կանխապես անցնել բժշկական քննություն).

գ) Կարդալ-գրել իմանալ.

դ) Իմանալ ներկա հրահանգը, ազդանշանների կանոնները և յերկաթուղային բանվորների և ծառայողների կարգապահության կանոնադրությունը և սլաքավարների աշխատանքին վերաբերվող յերկաթուղու առանձին կարգադրությունները.

յե) Իր պարտավորությունների գիտության նըկատմամբ սահմանված քննություն բռնել և անցնել աշխատանքի փորձնական ժամկետը սլաքային պահականոցում հերթապահ սլաքավարի հսկողության և պատասխանատվության տակ։

Ծանոթություն.— Նորոգության (ռեմոնտային) բանվորի, գծային կամ կայարանային պահապանի պաշտոնում մեկ տարուց վոչ պակաս ծառայած աշխատողները, ազատվում են դեկատային գործնական ստաժ անցնելուց, բայց պետք է սահմանված քննությունը բռնեն սլաքավարի պաշտոնի համար։

§ 4. Ավագ սլաքավարի պաշտոնին նշանակվող աշխատավորը, մեկ տարուց վոչ պակաս պետք է աշխատե շարքային սլաքավարի պաշտոնում և սահմանված քննությունը բռնե նոր պաշտոնի համար։

§ 5. Սլաքավարները յենթարկվում են պարբերական ստուգողական քննությունների իրենց պարտավորությունները իմանալու նկատմամբ։

§ 6. Սլաքավարները, վորոնք ստուգողական քըննություն չեն կարող բռնել, տեղափոխվում են գնացքների յերթևեկման հետ չկապված պաշտոնին, կամ ծառայությունից հեռացվում են։

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 7. Սլաքավարներին նշանակելը, նրանց ուրիշ պաշտոնի տեղափոխելը, ինչպես նաև ծառայությունից հեռացնելը կատարում է կայարանի պետը։

§ 8. Ծառայության մտնելիս սլաքավարին տըրվում է ներկա հրահանգը, ազդանշանների կանոնները և յերկաթուղային տրանսպորտի բանվորների և ծառայողների կարգապահության կանոնադրությունը, ինչպես նաև յերկաթուղու կարգադրությունները, վորոնք վերաբերում են սլաքավարի աշխատանքին։

Բացի դրանից սլաքավարներին տրվում են.

ա) Կարմիր և կանաչ դրոշակներ պատյանում.

բ) Ձեռնա-ազդանշանային լապտեր.

գ) Յեղջյուր փող։

դ) Ճայթուկներ (տփի մեջ 6 հատ) մուտքի և ելքի պահականոցներում։

§ 9. Ծառայությունից հեռանալիս, կամ ուրիշ ծառայության տեղափոխվելիս, սլաքավարը պարտավոր է հանձնել կայարանապետին բոլոր նրան տրված հրահանգները, կանոնները, ազդանշանային և ուրիշ պատկանելիքները։

## 4. ՍՏՈՐԱԴՐԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

§ 10. Ավագ սլաքավարը ստորադրվում է անմիջապես կայարանի հերթապահին և, որպես կանոն, նրանից կարգադրություն է ստանում գնացքներն ընդունելու, անցկացնելու և ուղարկելու, ինչպես նաև մանևրային աշխատանքի համար։

Բացի դրանից, այն կայարաններում, որտեղ գծերի հերթապահներ կան, ավագ սլաքավարը մանևրային աշխատանքների նկատմամբ կատարում է գծերի հերթապահի ցուցմունքները։

Շարքային սլաքավարը ստորադրվում է անմիջապես ավագ սլաքավարին և, որպես կանոն, նրա միջոցով կարգադրություններ է ստանում կայարանի հերթապահից, իսկ մանևրային աշխատանքի նկատմամբ—գծերի հերթապահից։ Կենտրոնացրած սլաքների և ձեռքով կատարվող գործողության սլաքների սպասարկման դեպքում, որոնք մտնում են կենտրոնացրած պահականոցի շրջանը. շարքային սլաքավարները ստորադրվում են պահականոցի ազդանշանատվին և նրա միջոցով ստանում են կայարանի հերթապահի



կարգադրությունները։ Կայարանի հերթապահը նույնպես կարող է անմիջապես կարգադրություններ տալ շարքային սլաքավարներին։

## 5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎԱԳ ՅԵՎ ՇԱՐՔԱՅԻՆ ՍԼԱՔԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

§ 11. Սլաքավարը պարտավոր է հերթապահության գալ համաձայն կայարանի պետի կողմից սահմանված գրաֆիկի, որը կախվում է պահականոցի հսկարանում։

Հերթապահության մտնելուց առաջ և այդպիսին հանձնելուց հետո, սլաքավարը պարտավոր է ներկայանալ կայարանի պետին, կամ ավագ սլաքավարին (որտեղ այդպիսիններ կան)։

§ 12. Ավագ սլաքավարը հերթապահության մտնելուց առաջ պարտավոր է ներկայանալ կայարանի հերթապահին և հերթապահությունն ընդունելուց հետո զեկուցել նրան իր շրջանի դրության մասին։

Հերթապահությունն ընդունելիս շարքային սլաքավարը պարտավոր է.

1) Զննել բոլոր սլաքային ուղեփոխները·

2) Զննել լծակները·

3) Զննել փականակները·

4) Զննել խաչմերուկները·

5) Համոզվել, որ սլաքային ուղեփոխների լեզվակները քիփ կերպով կպած են մայր ռելսերին.

6) Զննել գծերում կանգնող շարժական կազմը, որպեսզի վագոնները դուրս չգան սահմանային սյունիկներից և որպեսզի վագոնները իրար հետ կցված

լինեն, արգելակված և սեպավորված լինեն տակդիրներով կամ սանդալներով (башмаки).

7) Ցանկի համաձայն ընդունել ինվենտարը, ազդանշանային պատկանելիքները և գործիքը․

8) Ծանոթանալ յեղած կարգադրություններին։

Միայն հավաստիանալուց հետո, որ սլաքային պահականոցը լիակատար կարգապահության և սարքինության մեջ է, ընդունում է հերթապահությունը և ստորագրվում է սահմանված մատյանում։

§ 13. Հերթապահությունը հանձնող սլաքավարը պարտավոր է.

1) Հանձնել նրան փոխարինելու համար յեկող սլաքավարին պահականոցի բոլոր ազդանշանային պատկանելիքները, ինվենտարը և գործիքները․

2) Նրա հետ միասին զննել բոլոր սլաքային ուղեփոխները․

3) Զննել լծակները․

4) Զննել փականակները և խաչկապերը․

5) Զննել գծերում կանգնող շարժական կազմը․

6) Հերթապահության մտնող սլաքավարին ծանոթացնել յեղած կարգադրություններին և գլխավորապես ընդունման և ուղարկման համար սպասվող գնացքների մասին և ստորագրվել սահմանված մատյանում հերթապահությունը հանձնելու մասին։

§ 14. Յեթե ընդունվող պահականոցի ստուգման և զննման ժամանակ վորևե թերություններ հայտնաբերվեն, (§§ 12 և 13), այն դեպքում հերթապահության մտնող սլաքավարը, պարտավոր է հայտնել կայարանի հերթապահին, կամ ավագ սլաքավարին և մի



ջոցներ ձեռք առնել յերթևեկության անվտանգությունը պաշտպանելու համար։

§ 15. Հերթապահության ժամանակ սլաքավարը պահականոցից չի կարող բացակայել առանց կայարան հերթապահի թույլտվությանը։

§ 16. Արգելվում է սլաքավարին համաձայնություն գալ ուրիշ սլաքավարի հետ, փոխել իր աշխատանքի սպասանկման կետը, կամ հաստատված կանոնադրության փոփոխումն առանց կայարանապետի թույլտվության.

§ 17. Անսպասելի հիվանդության և պահականոցի սպասարկումը, շարունակելն անկարող լինելու դեպքում, սլաքավարը պարտավոր է այդ մասին հաղորդել ավագ սլաքավարին, (վորտեղ այդպիսին կա) կամ կայարանի հերթապահին, մնալով իր պահակում մինչև հերթապահությունից հեռանալու թույլտվություն ստանալը։

§ 18. Հիվանդության դեպքում և անկարող լինելով հերթապահության գալ, սլաքավարը պարտավոր է նախորոք տեղեկացնել այդ մասին կայարանապետին։

§ 19. Իր աշխատանքում նկատված դժվարությունների մասին շարքային սլաքավարը դիմում է բացատրությունների համար ավագ սլաքավարին, իսկ այնտեղ, վորտեղ ավագ սլաքավար չկա, դիմում է կայարանի հերթապահին։ Նույնպիսի դեպքերում ավագ սլաքավարը դիմում է կայարանի հերթապահին։

§ 20. Աշխատանքում գտնվող սլաքավարն իր մոտ պետք է ունենա.

1) Ցերեկը կարմիր և կանաչ դրոշակներ.

2) Գիշերը, ինչպես նաև ցերեկը մութ և մառախլապատ ժամանակ՝ վառած ձեռնաազդանշանային լապտեր.

3) Ազդանշանային յեղջյուր։

Մուտքի և ելքի սլաքները սպասարկող սլաքավարը բացի դրանից պետք է ունենա ճայթուկներ (տուփի մեջ 6 հատ)։

§ 21. Սլաքավարը պետք է իմանա՝ 1) կայարանի տեխնիկական կարգադրիչ ակտից քաղվածքը, որը վերաբերվում է սպասարկվող պահականոցին, 2) սլաքի կառուցվածքը և նրա կազմի բոլոր մասերն ու նրանց նշանակությունը, 3) իր պահականոցի սլաքների նորմալ դրությունը, 4) գծերի դասավորությունը, համարագրումը, նշանակումը և տեղական անվանումը, որոնք մտնում են նրա կողմից սպասարկվող սլաքային պահականոցին սահմանները, 5) Այդ գծերի տարողությունը (վագոններով)։

§ 22. Կայարանի հերթապահի կարգադրությամբ սլաքավարին կարող են հանձնարարվել գնացքային լոկոմոտիվներին ուղեկցելու պարտավորություններ, որպես ուղեկցողի, ինչպես նաև վագոններն ու լոկոմոտիվների կցման և զատման համար, որի համար նա պետք է սահմանված քննություն բռնե։

§ 23. Հերթապահության մեջ գտնվող սլաքավարը պարտավոր է՝ յեթե կայարանում բեռների պահպանման համար պահապաններ չկան. հսկելու բեռների և վագոնների պահպանմանը, որոնք կանգնած են գծերում նրա պահականոցի տեղավորման սահմաններում, թույլ չտալով կողմնակի անձանց նրանց մոտենալու և ձեռք առնելով բոլոր միջոցները, հափշտակումների նախազգուշացման և չարագործներին ձերբակալման համար։

§ 24. Գծում գտած բոլոր առարկաների մասին, որ կորցրել են ուղևորները, կամ գնացքից ընկել են գծի վրա, ինչպես նաև շարժական կազմի թափված մասերի վերաբերյալ սլաքավարը պարտավոր է անմիջապես, անձամբ, կամ ավագ սլաքավարի միջոցով հաղորդելու կայարանի հերթապահին, կամ կայարանապետին։



Ծանրաքաշ առարկաները պարտավոր է գծից հանել և դարսել այնպիսի հեռավորության վրա, որպեսզի անցնող կազմը այդ առարկաներին չդիպչի։ Սլաքավարն այդ մասին պետք է հաղորդե կայարանի հերթապահին։

§ 25. Յեթե սլաքավարն իր ուժերով չի կարող գծից հանել հայտնաբերված առարկաները, այդ դեպքում նա պետք է նրանց պատսպարե կանգի ազդանշաններով և հաղորդե կայարանի հերթապահին։

§ 26. Միջանկյալ կայարանների սլաքավարի վրա, բացի պաշտոնով հիմնական պարտավորությունները, կայարանի պետի կարգադրությամբ կարող են դրվել աշխատանքի խտացման կարգով. կայարանային պահապանի, կուբ վառողի, լամպ վառողի պարտավորություններ, ինչպես նաև կայարանային շենքերի տաքացման, նրա պահականոցի սահմաններում գտնվող վագոնների պակգաուզների և բեռների պահպանման աշխատանքներ։

## 6. ՍԼԱՔԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԼԱՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՅԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

§ 27. Սլաքային ուղեփոխները միշտ պետք է պահվեն սարքին դրությամբ և ժամանակին լուսավորվեն խավար և մառախլապատ ժամանակ։

Սլաքը պետք է ազատ կերպով շարժվի մեկ դրությունից մյուսը, ըստ որում լեզվակները պետք է պինդ կպչեն մայր ռելսերին. խաչմերուկների և հակառելսերի (контррельс) ջրդանները պետք է միշտ մաքուր լինեն։

§ 28. Վորպեսզի ապահովե սլաքային ուղեփոխի պահումն մշտապես միանգամայն սարքին և մաքուր դրությամբ, սլաքավարը պետք է մանրակրկիտ և հաճախ զննե և մաքրե ուղեփոխի բոլոր մասերը, հեռացնե ամեն տեսակ պատահմամբ նրա մեջ ընկած առարկաները և աղբը, իսկ ձմեռ ժամանակ—սառույցը և ձյունը։ Մաքրումը կատարվում է քերակով, ավելով և թիյով։ Սլաքային ուղեփոխները պետք է մաքրվեն սլաքային ուղեփոխի լեզվակներից սկսած մինչև խաչմերուկը և նրանից դուրս յերկուական մետր մեկ և մյուս կողմը։

Սլաքային ուղեփոխի մոտ անձրևից և հալվող ձնից ջրի հավաքվելը թույլ չտալու համար, սլաքավարը պետք է շինե վոչ մեծ անցքային արխեր. ջուրը հեռացնելու համար։

§ 29. Սլաքավարն իր պահականոցի սահմաններում պետք է հետևի, արդյոք վորևե տեղ ռելսը, կամ մակադիրը չեն պայթել, արդյոք լեզվակի գլխիկը մայր ռելսի գլխիկից վերև չե՞ն բարձրանում, չե՞ն հեռացել արդյո՞ք կոստիլները կամ պտուտակավոր մեխերը, չե՞ն թուլացել արդյոք բոլտերը։

Ռելսի ստորոտին անբավարար կերպով կպած կոստիլները պետք է տակհարել, պտուտակավոր մեխերը պտտել, իսկ թուլացած բոլտերը պնդացնել։ Վորպեսզի համոզվել, վոր սլաքի բոլոր բաղկացուցիչ



մասերը սարքին են, սլաքը պետք է տեղափոխել զանազան դրությամբ և ստուգել այդ դեպքում սլաքային լեզվակները վորչափ պինդ են կպչում մայր ռելսին։

§ 30. Վերահսկման փականքներ, կամ արգելիչներ ունեցող սլաքները, վորոնք փակվում են կախած փականքով, պետք է ստուգվեն բանալու պտտմամբ։

Դրա համար հարկավոր է դեն գցել փականքով, կամ արգելիչով փակված սլաքի բալանսը, թեթև սեղմել լծակը և նայել, արդյո՞ք լեզվակը չի հեռանում մայր ռելսից։ Յեթե լեզվակը մայր ռելսից հեռանա 3 միլիմետրից ավել, նշանակում է սլաքային փականն անկանոն է գործում և այդ մասին հարկավոր է անմիջապես զեկուցել ավագ սլաքավարին, իսկ այնտեղ, ուր նա չկա, կայարանի հերթապահին։

Մինչև սլաքային փականը սարքին դրության բերելը, գնացքների անցնելու ժամանակ այդպիսի սլաքը պետք է սպասարկվի առանձին սլաքավարի կողմից բալանսի սեղմամբ։

Լեզվակի պտուտակի մեծությունը չափվում է լեզվակի և մայր ռելսի արանքում, սլաքային թնճակի մոտ հատուկ թիթեղներ դնելով, վորոնց վրա ցուցված է նրանց հաստությունը։

§ 31. Սլաքի շփվող մասերը պետք է յուղել։ Հատուկ խնամքով պահանջվում է յուղել սլաքային լեզվակների տակի բարձերը։ Սլաքային ուղեփոխները յուղելուց առաջ պետք է անպայման հեռացնել կեղտոտված յուղելիքը։

§ 32. Սլաքի փչացման կամ հերձահատի (взрез) դեպքում, վորոնք խախտում են նրա կանոնավոր

գործողությունը, ինչպես նաև կենտրոնացրած սլաքների մեխանիկական շղկապիչների փչանալու դեպքում, այդ սլաքը սպասարկող սլաքավարը, պարտավոր է անմիջապես պատսպարել այն ազդանշաններով. (տես ազդանշանների կանոնների § 26-ը) և փչանալու մասին հաղորդել ավագ սլաքավարին, իսկ վորտեղ նա չկա,—կայարանի հերթապահին։

§ 33. Ձեռքի սլաքների, սլաքային փականքների փչանալու դեպքում, սլաքավարը պարտավոր է անմիջապես պահանջել ավագ սլաքավարի միջոցով, իսկ այնտեղ, ուր նա չկա, կայարանի հերթապահի միջոցով՝ փոխարինել նրանք։ Մինչև փականքները փոխարինելը սլաքները պետք է ամրացվեն արգելիչներով։

§ 34. Կենտրոնացրած սլաքների անջատումն գործելուց և նրանց ձեռքի գործողության փոխադրելը, կարող են կատարվել միայն կայարանի հերթապահի գիտությամբ և համաձայնությամբ։

§ 35. Վնասված սլաքի նորոգություն կատարելը սլաքավարը կարող է թույլ տալ միայն կայարանի հերթապահի հատուկ թույլտվությամբ, աշխատանքների տեղը սահմանված ազդանշաններով պատսպարելուց հետո։ Աշխատանքների տեղն ազդանշաններով պատսպարելը դրվում է վերանորոգության ղեկավարի վրա։

§ 36. Բացի պահակատեղի սլաքավարից, ով էլ վոր լինի արգելվում է փոխել սլաքները։ Տեխնիկական հսկողության աշխատողները, վորոնց վրա դրված է հսկելու սլաքների սարքին գործողությանը, նրանց փոխելու կարիքը զգալիս, պետք է դրա համար ստա-



նա կայարանի հերթապահի թույլտվությունը, վերջինի կողմից սլաքավարին հաստատված և սլաքի զննությունը և փորձարկումը կատարել անպայման պահակատեղի սլաքավարի ներկայությամբ։

Զննությունը և սարքի բերելը վերջացնելուց հետո, սլաքը պետք է սլաքավարի կողմից անմիջապես նրա նորմալ դրության մեջ դրվի։

§ 37. Սլաքները գնացքի ընդունման և ուղարկման համար պատրաստելը կատարվում է պահակատեղի սլաքավարի կողմից, միայն ավագ սլաքավարի կամ նրան փոխարինող ազդանշանատուի ցուցմունքով, իսկ այնտեղ, ուր այդ պաշտոնները սահմանված չեն, —կայարանի հերթապահի անմիջական ցուցմունքով։

§ 38. Գնացքների և մանևրային կազմերի ընդհարումները նախազգուշացնելու նպատակով, ինչպես նաև գնացքների պոկման և կայարանից վագոնների պատահական հեռանալու դեպքում, սլաքավարը պարտավոր է միջոցներ ձեռք առնել այդ կազմերը և վագոնները հեռացնելու համար և սլաքը իր հայեցողությամբ դնել ազատ կայարանային ուղիի վրա։

§ 39. Սլաքը փոխադրելով սլաքավարը պետք է ուշադրություն դարձնե, վորպեսզի սլաքի լեզվակը պինդ կպչե մայր ռելսին, վորի համար պետք է նա ամուր սեղմե լծակը ու բալանսի վրա։

§ 40. Չե թույլատրվում փոխադրել սլաքը, երբ նրա վրայով գնացքը, կամ շարժական կազմը մանևրաների ժամանակ շարժվում է։

## 7. ՍԼԱՔԱՎԱՐՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՆԱՑՔՆԵՐԸ ԸՆԴՈՒՆԵԼԻՍ, ՈՒՂԱՐԿԵԼԻՍ ՅԵՎ ԱՆՑԹՈՂՆԵԼԻՍ

*§ 41. Սլաքավարը հերթապահության մեջ գտնըվելով, հանդիսանում է, վորպես ժամապահ պահակատեղում, նման Կարմիր բանակի ժամապահին և նա պարտավոր է ճշտությամբ կատարել իր պարտականությունները։*

*Սլաքավարը պարտավոր է հիշել, վոր նրա անկանոն գործողություններից կարող է առաջ գալ՝ ա) գնացքի ընդունումն զբաղված գծի վրա, բ) գնացքի ուղարկումն անհամապատասխան գծով, գ) գնացքի կամ շարժական կազմի ռելսերից ընկնումն, դ) շարժական կազմի հեռացումն կայարանից, գնացքների ընդհարումն և ուրիշ ավարիաներ։*

*Ցուցված դեպքերը վերջանում են պետության համար մեծ վնասներով, գնացքների յերթևեկումների հետապահումներով և մարդկային զոհերով։ Ուստի սլաքավարը պարտավոր է բոլոր միջոցներով նախազգուշացնել գնացքների և շարժական կազմի հետ ավարիաները, ինչպես նաև դժբախտ դեպքերը մարդկանց հետ։*

*§ 42. Հեռախոսով կանչ ստանալիս, սլաքավարն անմիջապես պետք է պատասխանե, անվանե իր պահակատեղի համարը և ազգանունը ու լսե ավագ սլաքավարի կարգադրությունը, իսկ այնտեղ, ուր նա չկա,—կայարանի հերթապահի կարգադրությունը, ընդունման և ուղարկման համար սլաքները պատրաստելու մասին, կամ գնացքն առանց կանգառման անց*



*թողնելու համար։ Կարգադրություն տվողը նույնպես պետք է անվանե իր պաշտոնը և ազգանունը։*

*§ 43. Սլաքավարը պարտավոր է բառացի կրկնելու ստացված հրամանը և ստանալ հաստատումն այն մասին, վոր նա հրամանը հասկացել է, վորից հետո անմիջապես ձեռնամուխ լինել առաջադրված մարշրուտի պատրաստմանը։*

*Մարշրուտը պատրաստելիս սլաքավարը պետք է համոզվի.*

*1) Վոր գծերը և սլաքները, վորոնցով սպասվում է գնացքի ընթացումն, ազատ են.*

*2) Վոր բոլոր վաղուց կայարան ժամանած գնացքները տեղավորված են սահմանային սյունիկների սահմաններում։*

1001 / 38766

*§ 44. Առաջադրված մարշրուտով սլաքները դնելուց հետո սլաքավարը պարտավոր է փականքներով փակելու բոլոր սլաքները, վորոնք համաձայն տեխնիկական-կարգադրիչ ակտից քաղվածք ե՝ պետք է գնացքների ընդունման, ուղարկման անցման ժամանակ փակ լինեն։*

*Մարշրուտի պատրաստ լինելու մասին սլաքավարը պետք է զեկուցի ավագ սլաքավարին, իսկ վորտեղ նա չկա կայարանի հերթապահին։*

*§ 45. Կայարաններում, վորտեղ կան ավագ սլաքավարներ, մարշրուտի պատրաստ լինելու ստուգումը և այդ մասին զեկուցումը կատարվում է ավագ սլաքավարների կողմից։*

*Սլաքների և ազդանշանների կենտրոնացրած կայարաններում, վորտեղ կան ազդանշանատուներ, մարշրուտի պատրաստումն կայարանի հերթապահի*



Гос. Публ. Библ-ка ՀՍԽՀ-ССР им. А. Мясникяна

կարգադրությամբ կատարվում է ազդանշանատուների կողմից։

§ 46. Կայարանի հերթապահի հեռախոսային կարգադրությունները, մարշրուտի պատրաստման մասին, սլաքավարների և ազդանշանատուների զեկուցումը, մարշրուտի պատրաստ լինելու մասին պետք է տարվեն հետևյալ կարգով.

ա) Գնացքն ընդունելիս. «Ես—կայարանի հերթապահն եմ (ազգանուն)։ Պատրաստեցեք մարշրուտը գնացք № ______ Ա կայարանից այսինչ գծի վրա», կամ.

բ) Գնացքն ուղարկելիս. «Ես—կայարանի հերթապահն եմ (ազգանունը)։ Պատրաստեցեք մարշրուտը գնացք №........ այսինչ գծից Բ կայարանն ուղարկելու համար»։

Ավագ սլաքավարը ստանալով կայարանի հերթապահի կարգադրությունը, պատասխանում է.

ա) Գնացքն ընդունելիս, կամ ուղարկելիս. «Ես ավագ սլաքավար այսինչս (ազգանունը) մարշրուտը պատրաստելու կարգադրությունը №........ գնացքը. Ա կայարանից ընդունելու, կամ ուղարկելու համար այսինչ գծի, կամ կայարանի վրա այսինչ գծից ստացա»։

Եթե ավագ սլաքավարի պատասխանը համոզե կայարանի հերթապահին, որ կարգադրությունը ճիշտ է հասկացվել, այն դեպքում կայարանի հերթապահը պատասխանում է. «Ճիշտ է»։

Դրանից հետո ավագ սլաքավարը՝ 1) ձեռքի սլաքների բանալիները հանձնում է շարքային սլաքավարներին և նրանց հրամայում է դնել և փակել սլաքները գնացքի ընդունման, կամ ուղարկման գծով,



2) ստուգում է ճիշտ է, արդյոք կատարված շարքային սլաքավարների կողմից նրա հրամանը, 3) նրանցից բանալիները վերցնում է, 4) կազմող բրիգադներին հրամայում է ընդհատել մանևրները ընդունման գիծը մեկնելով և 5) համոզվելով, որ մարշրուտը ճիշտ է պատրաստված, այդ մասին զեկուցում է կայարանի հերթապահին։

«Ես—ավագ սլաքավար այսինչն եմ (ազգանունը), գնացք №.... ընդունելու կամ ուղարկելու համար Ա կայարանից Բ կայարանին այսինչ գծի վրա, կամ այսինչ գծից պատրաստ է։ Սլաքները ճիշտ են դըրված, փակված են, բանալիները գտնվում են ինձ մոտ»։

Կայարանի հերթապահը լսելով ավագ սլաքավարի զեկուցումը և համոզվելով, որ մարշրուտը պատրաստված է համաձայն իր տված ցուցմունքի, կարգադրություն է տալիս ազդանշանը (սեմաֆորը, լուսաֆորը բանալու մասին։

Այն կայարաններում, որտեղ ավագ սլաքավարներ չկան, մարշրուտը պատրաստելու կարգադրությունը գնացքն ընդունելու կամ ուղարկելու համար կայարանի հերթապահը տալիս է անմիջապես պահակատեղի սլաքավարին։

§ 47. Գնացքի ժամանմանը սպասելով սլաքավարը պետք է գտնվի իր պահակատեղում։ Գնացքն իրենց պահականոցով անցթողնելով սլաքավարները պետք է ձեռքին ունենան ցերեկը բացված կանաչ դրոշակ, իսկ գիշերը—ձեռքի լապտեր կանաչ ճրագով, որը ցույց է տալիս գնացքի ընթացման համար գծերի և սլաքների պատրաստ լինելը։

§ 48. Սլաքներով, ինչպես ժամանող, նույնպես և կայարանից մեկնող գնացքի անցնելիս, սլաքավարը պարտավոր է ուշադրություն դարձնելու վագոնների սարքին դրության և բեռան կանոնավոր դրվածքին բաց շարժական կազմի վրա։ Նկատած անսարքությունների դեպքում, վորոնք կարող են սպառնալ գնացքի անվտանգ յերթևեկմանը, սլաքավարը պետք է տա կանգառի ազդանշաններ, իսկ հետո հաղորդե կայարանի հերթապահին։

§ 49. Կայարանում գնացքը կանգնեցնելուց հետո, սլաքավարը պարտավոր է համոզվել պոչի ազդանշանների առկայության մեջ և վոր գնացքի վերջին վագոնն անցել է սահմանային սյունիկը, և այդ մասին հաղորդել կայարանի հերթապահին։ Յեթե սլաքավարին հայտնի չե, վոր գնացքն ընթանում եր հրիչով, այդ դեպքում կայարանի հերթապահին գնացքի ժամանման մասին զեկուցելիս միաժամանակ հաղորդել, վոր ժամանել է նաև հրիչը և վոր վերջինը տեղավորված է սահմանային սյունիկից դուրս համապատասխան գծում։

§ 50. Յեթե կայարանը ժամանած գնացքի պոչը չի անցել սահմանային սյունիկից և խանգարում է շարժական կազմին հարևան գծերի վրա անցնելուն, այդ դեպքում սլաքավարը պետք է անմիջապես գիծը պատսպարե կանգառի ազդանշաններով, համաձայն ազդանշանների կանոնների § 36-ի 8-րդ կետի ցուցմունքների։

§ 51. Ժամանող գնացքի վրա պոչի ազդանշանների բացակայության դեպքում (կողքի և բուֆերային լապտերների) սլաքավարը պետք է անմիջապես



դուրս հանե յելքի սլաքի վրա կանգառի ազդանշան կայարանի կողմը, չթույլ տա մանևրային կազմերի և լոկոմոտիվների յերթևեկությունը և գնացքների ուղարկումն այդ զբաղված գծով։ Բացի դրանից սլաքավարը պարտավոր է այդ մասին անմիջապես հեռախոսով հաղորդել կայարանի հերթապահին և ձեռք առնել հետևյալ միջոցները.

1) Պատրաստել սլաքները ազատ գծերից մեկի վրա գնացքի պոկված մասի ընդունման համար.

2) Յեթե սլաքները փակեն և նրանց բանալիները գտնվում են ավագ սլաքավարի կամ կայարանի հերթապահի մոտ, այդ դեպքում սլաքավարը պետք է ռելսերի վրա դարսե սանդալներ (башмаки) շպալներ, տակդիրներ և ուրիշ առարկաներ, վորոնք կարող են կանգնեցնել վագոնների յերթևեկությունը, ռելսերի վրա ավազ լցնել.

3) Յեթե ձեռք առած միջոցներն անբավարար լինեն, պահակատեղի սլաքավարը, նրա մոտ սլաքային ձեռքի ուղեփոխների բանալիների առկայության դեպքում, սլաքը շարժվող վագոնների տակ փոխադրման միջոցով պետք է առաջ բերե վագոնների դուրս ընկնելը ռելսերից։

§ 52. Յեթե նկատվի, վոր կայարանից մեկնող գնացքի մոտ բացակայում են պոչի ազդանշաններ, սլաքավարը պետք է միջոցներ ձեռք առնե գնացքը կանգնեցնելու համար, տալով կանգառի ազդանշաններ և հետո այդ մասին հաղորդե կայարանի հերթապահին։

§ 53. Սլաքավարի կողմից ղեկավարվող մուտքի սեմաֆորը փակվում է գնացքի ամբողջ կազմով սեմաֆորի մոտից անցնելուց հետո։

§ 54. Այն դեպքերում, յերբ գծերում կամ սլաքներում, վորոնցով պետք է անցնի կայարանում ընդունվող գնացքը, խոչնդոտ առաջ գա գնացքի յերթևեկման համար, հերթապահ սլաքավարը պարտավոր է.

1) Փակել ձեռքի գործողության մուտքի սեմաֆորը, յեթե ղեկավարման լծակը գտնվում է սլաքային պահակատեղում.

2) Հաղորդել կայարանի հերթապահին և ավագ սլաքավարին.

3) Խոչնդոտը պատրաստել սահմանված ազդանշաններով։

§ 55. Ազդանշանների վատ յերևալու դեպքում (մառախուղ, փոթորիկ, հեղեղ, խիտ ձնաթափ), յերբ կայարանը չի կարող ընդունել ժամանող գնացքը, մուտքի փակ սեմաֆորները, վորոնք նախազգուշացնող սկավառակներ չունեն, պետք է ինչպես ցերեկը, նույնպես և գիշերը կայարանի հերթապահի կարգադրությամբ լրացվեն ճայթուկներով։ (Տես ազդանշանների կանոնների § 19-ը)։

§ 56. Սլաքավարը, չսպասելով կայարանի հերթապահի կարգադրությանը, պարտավոր է ճայթուկները դարսել հետևյալ դեպքերում.

1) Յեթե գնացքը կանգ չառնե մուտքի փակ սեմաֆորի մոտ.

2) Յեթե գնացքին, վորը ժամանում, կամ կայարանից մեկնում է, գնացքից, կամ գծից կանգառման ազդանշաններ են տրվում, իսկ մեքենավարը չե նկատում նրանք։

3) Յերբ կայարանում գնացքն ընդունելու համար խոչնդոտ է հայտնաբերված և գնացքն արդեն անցել է մուտքի սեմաֆորը.



4) Յեթե գնացքը, վորը կայարանով ընթանում է առանց կանգառի, կանգ չառնե յելքի փակ ազդանշանի մոտ։

## 8. ՍԼԱՔԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՆԱՑՔՆԵՐԸ ՈՒՂԵԿՑՈՂԻ ՀԵՏ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

§ 57. Այն դեպքերում, յերբ գնացքը պետք է կայարան բերվի ուղեկցողի հետ, կայարանի հերթապահի կարգադրությամբ, սլաքավարին կարող են հանձնարարվել ուղեկցողի պարտականությունները։ Ճանապարհվելով գնացքին դեպի մուտքի ազդանշանն իբրև ուղեկցող ուղեկցելու համար, սլաքավարը պարտավոր է.

ա) Կայարանի հերթապահից ստանալ «տոմս-թիթեղիկը» և գնացքը կայարան բերելու կարգի մասին ցուցմունքը.

բ) Ստուգել մարշրուտով բոլոր սլաքների դրության կանոնավորությունը, տրված կայարանի հերթապահի կողմից գնացքը ներս տանելու համար։

Մուտքի ազդանշանի մոտ գնացքը կանգնեցնելուց հետո սլաքավարը պարտավոր է «տոմս-թիթեղիկը» ներկայացնել գնացքի գլխավոր կոնդուկտորին և մեքենավարին. հայտնել նրանց ինչու գնացքն ընդունվում է ուղեկցողի հետ և վո՞ր գծի վրա, վորից հետո տեղավորվել լոկոմոտիվի վրա և գլխավոր կոնդուկտորի կողմից ուղարկման ազդանշան տալուց հետո գնացքն ուղեկցել դեպի կայարան։

Գնացքը սլաքներին մոտենալիս ուղեկցողը պետք է ուշադրություն դարձնե նրանց դրության վրա։ Յե-

*թե ուղեկցողը նկատե, որ սլաքների դրությունը չի համապատասխանում գնացքի ընդունման սկզբնական մարշրուտին, նա պարտավոր է մեքենավարից պահանջել անմիջապես կանգնեցնել գնացքը՝ Նրա հետագա ընթացքը կարող է թույլատրվել միայն կայարանի հերթապահի ցուցմունքով, նրանից հեռախոսով, կամ անձամբ նորից ստացված։*

## 9. ՍԼԱՔԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՆԱՑՔԱՅԻՆ ԼՈԿՈՄՈՏԻՎՆԵՐԻՆ, ՎՈՐՊԵՍ ՈՒՂԵԿՑԼՈՒ ՀԱՄԱՐ

§ 58. *Կայարանի հերթապահի կարգադրությամբ սլաքավարի վրա կարող են դրվել լոկոմոտիվների ուղեկցողների պարտականություններ այդպիսիների դեպոյից գնացքների համար ընթանալիս և գնացքներից դեպոն վերադառնալիս։*

*Այս դեպքում ուղեկցողի պարտականությունները կատարվում են տվյալ կայարանում սահմանված կարգով։*

## 10. ՍԼԱՔԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԵՎՐԱՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԻՍ

§ 59. *Սլաքավարը պարտավոր է մանևրաներին կարգադրող աշխատողի պահանջմամբ սլաքները փոխադրել ազդանշաններով պահանջվող դրության մեջ և նրանց պատրաստ լինելուց հետո, տալ պատասխանող ազդանշաններ։*

*Եթե սլաքն անկարելի լինի ժամանակին դնել պահանջվող դրության մեջ, կամ սլաքարարը նկատի*



*վորևե խոչընդոտ լոկոմոտիվի կամ վագոնի յերթևեկմանը, այդ դեպքում նա պարտավոր է տալ կանգառի ազդանշան։*

§ 60. *Մանևրային տեղաշարժումների ժամանակ, վորոնց դեպքում մանևր կատարող կազմը. սլաքն անցնելիս փոխում է իր յերթևեկության ուղղությունը, հակառակ կողմը (տես նկ. 1, 26 յերեսի վրա), սլաքավարը պետք է գտնվի այդ սլաքի մոտ և նրա վրայով վերջին վագոնի անցնելուց հետ՝ տալ կանգառի ազդանշան, իսկ սլաքը կազմի հակառակ կողմը յերթևեկելու համար փոխադրելուց հետո՝ տալ «առաջ», կամ «հետ», ազդանշանը լոկոմոտիվի դրությունից կախված։*

§ 61. *Շարժական կազմով խաչի (համուղի) սլաքի կտրվածքի (լեզվակների պտուտակավոր բանալիներ) մեջ անցնելու դեպքում, մանևրա անող կազմը պետք է անմիջապես կանգնեցվի և այդ դեպքում նրա հակառակ տեղաշարժը պետք է արգելվի (տես նկար 2 26 յերեսի վրա)։*

*Այդպիսի դեպքի մասին սլաքավարը զեկուցում է կայարանի հերթապահին, անմիջապես միջոցներ ձեռք առնելու համար։*

§ 62. *Մանևրաների ժամանակ լոկոմոտիվները, կազմերը և վագոնները գծերում թողնելիս սլաքավարը պարտավոր է հսկելու, վորպեսզի լոկոմոտիվները և վագոնները դուրս չգան սահմանային սյունիկներից։*



Նկ. 1



Նկ. 2



## 11. ՍԼԱՔԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՎԱՐԻԱՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

*§ 63. Գնացքների հետ ավարիաների, հրդեհների և ուրիշ դժբախտ դեպքերի ժամանակ, սլաքավարը պետք է անմիջապես զեկուցե կայարանի հերթապահին և միջոցներ ձեռք առնե յերթևեկության անվտանգությունը պատսպարելու և ավարիաների հետևանքները շուտափույթ կերպով լիկվիդացիայի յենթարկելու համար։*

*§ 64. Վագոնները առանց լոկոմոտիվի, կամ լոկոմոտիվը առանց լոկոմոտիվային բրիգադի քմահաճ մեկնելը նկատելու դեպքում, սլաքավարը պարտավոր է տալ ընդհանուր ահակոչի ազդանշան, միջոցներ ձեռք առնել նրանց կանգնեցնելու համար և անմիջապես զեկուցել կայարանի հերթապահին։*

*Այդպիսի դեպքերում պետք է դարսել շպալներ, բրուսներ, սանդալներ,* (башмаки) *ռելսերի վրա ավազ լցնել, վագոնների կամ լոկոմոտիվի շարժումն ուղղել դեպի ազատ փակուղային գծերը, կամ վագոններով զբաղված գծերը, բայց վորոնց կազմերում չկան մարդկանցով, կենդանիներով և վտանգավոր բեռով վագոններ. Ծայրահեղ դեպքում սլաքները շարժվող վագոնների և լոկոմոտիվի տակ փոխադրման միջոցով պետք է առաջ բերե վագոնների դուրս ընկնելը ռելսերից։*

## 12. ՍԼԱՔԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՁՆԱԿԱՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

*§ 65. Աշխատանքում գտնվելով սլաքավարը պետք է հետևյալ նախազգուշական միջոցները ձեռք առնե.*

ա) Գծերն անցնել ուղիղ և վոչ թե սուր անկյան տակ, նայելով յերկու կողմը, չե՞ մոտենում արդյոք գնացքը կամ հետ տրվող կազմը.

բ) Գնացքի մոտենալիս ռելսերից հեռանալ վոչ պակաս 2 մետրից.

գ) Շենքերից, սլաքային հսկարաններից, ինչպես նաև գծերում կանգնած վագոնների հետևից դուրս գալիս առանձնապես ուշադիր լինել, վորպեսզի շարժվող կազմով կամ գնացքով վերահաս չլինել.

դ) Առանձին զգուշություն պահպանել ձմեռը գծերով բարձրացրած օձիքով, բաշլուխով և այն անցնելիս ի նկատի ունենալով ազդանշանների լսելիության թուլանալը.

յե) Ցերթևեկության ժամանակ չցատկել արգելակային տափարակների և լոկոմոտիվների աստիճանների վրա, բացի այն դեպքերը, յերբ այդ անհրաժեշտ է գնացքների հետ ավարիաները և մարդկանց հետ դժբախտ դեպքերը նախազգուշացնելու համար, այդ դեպքում հատուկ զգուշություն պահպանելով.

զ) Չմտնել վագոնների տակ մի կողմից գծի մյուս կողմն անցնելու համար, ինչպես նաև չնստել վագոնների բուֆերներին.

է) Ինքնակամ կերպով վագոնները ձեռքով տեղաշարժ չանել առանց մանևրանների կարգադրող և ղեկավարող աշխատողի թույլտվության.

ը) Վոտքով չկանգնել կենտրոնացրած սլաքների լեզվակների և մայր ռելսերի արանքում, սլաքը փոխադրելիս վոտքի ջզմելը խուսափելու համար.

թ) Գծերի միջով մեծ առարկաներ չքաշ տալ



գծերի ազատ լինելու համոզված չլինելով, չնստել ռելսերի և պլատֆորմաների կողքերին.

ժ) Կենտրոնացրած սլաքների մաքրումը մայր ռելսերի և լեզվակների արանքում կատարել միայն ավելներով և քերակներով, ձեռքը չիջեցնելով մայր ռելսի և լեզվակի արանքը ձեռքի սեղմելը խուսափելու համար։

ի) Կցիչի պարտականությունները կատարելիս հետևել, վորպեսզի կցման համար վագոնների արանքը մտնելիս բուֆերներով չճխլվել.

լ) Մոտքաշը լծասարքի ճանկի վրա գցելիս պետք է հետևել, ձեռքի մատները չնկնեն մոտքաշի ականջի և լծասարքի ճանկի արանքը։

## 13. ԱՎԱԳ ՍԼԱՔԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 66. Ավագ սլաքավարը պարտավոր է հսկել.

ա) Վորպեսզի պահակատեղի սլաքավարները հերթապահության գան համաձայն գրաֆիկի, ցուցված ժամանակը բռնեն իրենց տեղերը և իրենց մոտ ունենան սահմանված ազդանշանները.

բ) Վորպեսզի սլաքային և ձեռքի լապտերները, ինչպես նաև սլաքավարներին հանձնարարված սկավառակների և սեմաֆորների լապտերները ժամանակին հանդերձվեն և լուսավորվեն ճշտությամբ, պահվեն մաքրությամբ, վորպեսզի նրանց ապակիները մաքուր սրբված լինեն և ամբողջ սլաքային պահականոցում բոլոր հասանելիք գործիքները առկա լինեն և սարքին դրությամբ.

գ) Վորպեսզի սկավառակները և սեմաֆորները միշտ փակ լինեն և բացվեն միայն կայարանի հեր-

թապահի կարգադրությամբ և յերբ կայարանը պատրաստ է գնացքի ընդունման համար, այսինքն յերբ բոլոր գծերը, վորոնցով պետք է անցնի սպասվող գնացքը, ազատ են վագոններից, նրանց վրա մանևրանները դադարեցրած են, բոլոր սլաքները ճիշտ են դրված, լեզվակները պինդ կպած են մայր ռելսերին և փակված են արգելիչներով և փականքներով.

դ) Հերթապահության ժամանակ ավագ սլաքավարը սպասարկում է առաջին մուտքի սլաքը գնացքն ընդունելիս և վերջին յելքի սլաքը գնացքը ուղարկելիս, նախորոք ստուգելով իր շրջանի բոլոր սլաքային ուղեփոխները, վորոնք մտնում են տվյալ մարշրուտի մեջ և շարքային սլաքավարներից վերցնելով ձեռքի սլաքների փականքների բանալիները.

յե) Գծի սլաքների նրանց պարտականելիքների, սկավառակների և սեմաֆորների ամեն տեսակ անսարքության, կայարանային ուղիներում նկատված յերթևեկության համար խոչընդոտների մասին, ինչպես նաև սլաքավարների տրված ազդանշանների անսարքության մասին, նրանց մոտ պաշտոնյակում հրահանգների և ազդանշանների բացակայության մասին, ավագ սլաքավարը պարտավոր է անմիջապես հաղորդել կայարանի հերթապահին.

զ) Ավագ սլաքավարը պարտավոր է հրահանգել շարքային սլաքավարներին, նրանց պարտականություններին վերաբերվող կանոնների, կայարանի հերթապահի կարգադրությունների և մանավանդ ժամանող գնացքների ընդունման և մեկնող գնացքների անցթողնման նկատմամբ, ինչպես նաև անսարք սլաքների և շարժական կազմի պատսպարման նկատմամբ,



վորը դուրս է գալիս սահմանային սյունիկներից, կանգ առի ազդանշաններով, մանևրանները ժամանակին ընդհատելու և այդպիսիները կանոնավոր ոգտագործելու:

## 14. ԱՎԱԳ ՍԼԱՔԱՎԱՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

§ 67. Ավագ սլաքավարը իրավունք ունի կարգապահական տույժեր դնելու իրեն ստորադրված շարքային սլաքավարների վրա, համաձայն յերկաթուղային տրանսպորտի բանվորների և ծառայողների կարգապահության մասին կանոնադրության 26-րդ հոդվածի (նկատողություն, հանդիմանություն և խիստ հանդիմանություն):

## 15. ՍԼԱՔԱՎԱՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

§ 68. Բոլոր հանցագործությունների և թերությունների, իր պարտականությունների սխալ ոգտագործման, ծառայության մեջ կամ կայարանում ծառայությունից դուրս հարբած դրությամբ յերևալու համար սլաքավարները յենթարկվում են կարգապահական, տույժերի համաձայն յերկաթուղային տրանսպորտի բանվորների և ծառայողների կարգապահության մասին կանոնադրության, իսկ ավելի լուրջ հանցանքների և պաշտոնեական վոճրագործությունների համար դատական պատասխանատվության յեն յենթարկվում:

Բացի դրանից ավագ սլաքավարը պատասխանատու յեն շարքային սլաքավարների անկանոն գործողությունների համար, յեթե այդ գործողությունները

առաջ են յեկել ավագ սլաքավարի կողմից տարած անկանոն կարգադրություններից, կամ ավագ սլաքավարի կողմից շարքային սլաքավարների աշխատանքին հսկողության բացակայության համար։

Շահագործման կենտրոնական կառավարչության տեխնիկական սեկտորի պետ՝
Զվիրբուլ

---

# ՔԱՂՎԱԾՔՆԵՐ
## ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՑ, ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ ԿՈՂՄԻՑ, 1935 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԲՐ. Ե/530

---

## ՍԼԱՔԱՅԻՆ ՈՒՂԵՓՈԽՆԵՐԸ

*Սլաքների նորմալ դրությունը*

*§ 131. Սլաքները, յերբ նրանց վրայով շարժական կազմի տեղաշարժումներ չեն կատարվում, պետք է գտնվեն նրանցից յուրաքանչյուրի համար խստորեն վորոշված դրության մեջ, վորը կոչվում է նորմալ, ըստ վորում կենտրոնացրած սլաքների նորմալ դրությունը պետք է համապատասխանե նաև կայարանային պահականոցում, նրա կողմից ղեկավարող լծակների և կոթերի նորմալ դրությունը։*

*§ 132. Սլաքները նորմալ դրության մեջ պետք է գտնվեն.*

*ա) Մուտքի սլաքները միագիծ գծամասերի կայարաններում—յուրաքանչյուր ծայրից ղանազան գծերի վրա.*

*բ) Գլխավոր գծերի սլաքները յերկգիծ գծամասերում, այդ գծերով գնացքները անց թողնելու համար.*

*գ) Պարկային գծերի սլաքները—սլաքային փողոցի ուղղությամբ.*

դ) Մնացած կայարանային գծերի սլաքները—
այն դրության մեջ, վորից նրանք շատ հազվադյուտ
դեպքումն են դուրս բերվում.
յե) Գլխավոր գծերում գտնվող սլաքները, վորոնք
տանում են դեպի առբերման ուղիները և փակուղի-
ները (բացի բռնողներից և նախապահպաններից),—
գլխավոր գծերի ուղղությամբ.
գ) Սլաքները, վորոնք տանում են դեպի բռնող
և նախապահպան փակուղիները—այդ փակուղիների
ուղղությամբ։
Որ։վա մի մասի համար փակված կայարաննե-
րում, մուտքի սլաքները կայարանների փակման ժա-
մանակ, պետք է դրված և միացած լինեն գլխավոր
գծի ուղղությամբ գնացքների անարգել անցումը հը-
նարավոր դարձնելու համար։
Այդպիսի կայարանները յերթևեկման համար բա-
նալուց առաջ, սլաքները պետք է փոխադրվեն իրենց
նորմալ դրությամբ համաձայն այդ կայարանների
տեխնիկական—կարգադրիչ ակտի ցուցմունքի։
§ 133. Սլաքների նորմալ դրությունը պետք է
նշանակվի բաժանման կետի տեխնիկական-կարգադրիչ
ակտում և նրա քաղվածքում. բացի դրանից կենտրո-
նացրած սլաքների նորմալ դրությունը, պետք է ցուցվի
կենտրոնացրած սլաքների և ազդանշանների գործա-
դրման վերաբերյալ հրահանգներում, իսկ ձեռքի դե-
կավարման սլաքներինը՝ պետք է նշանակված լինի
սլաքի իրեն իրանի վրա։



Սլաքային պահականոցները յեվ շրջանները։ Սլաքների
յեվ սլաքային պահականոցների սարքավորումը յեվ
սպասարկումը։

§ 144. Կայարանի բոլոր սլաքային ուղեփոխնե-
րը միացվում են խմբերում, վորոնք կոչվում են սլա-
քային պահականոցներ։ Սլաքային պահականոցում
միացրվող սլաքային ուղեփոխների թիվը, նրանց տե-
ղավորելում, նրանց միջի տարածությունից, գնացք-
ների յերթևեկության խտությունից և սլաքային պա-
հականոցի աշխատանքի տեղական, պայմաններից
կախված, սահմանվում է շահագործման բաժանմունքի
պետի կողմից։
Ավագ սլաքավարին սպասարկման համար հանձ-
նարարվող սլաքային պահականոցների խումբը կազ-
մում է սլաքային շրջան։
§ 145. Գնացքների ընդունման և ուղարկման
ինչպես գլխավոր, նույնպես և ուրիշ կայարանային
ուղիներում բոլոր սլաքները, ինչպես նայև սլաքները
այն կայարանային ուղիներում, վորոնցով գիշեր ժա-
մանակ և ցերեկը մառախուղի, բուքի, հեղեղի և այլն
ժամանակ մանևրաներ են կատարվում, պետք է լու-
սավորված լինեն լուսավորվող սլաքային ցուցիչներով։
Մնացած սլաքների ցուցիչների լուսավորելը,
կախված այդ սլաքների բեռնավորման աստիճանից,
տեղերում սահմանվում է կայարանների պետերի կող-
մից յերթևեկության վերատեսուչների հետ միասին։
§ 146. Ձեռքի գործողության բոլոր սլաքները,
վորոնք դասավորված են գծերում, վորոնց վրայով
կատարվում է գնացքների ընդունումն, անցթողումն և

ուղարկումն, պետք է մատակարարված լինեն պարագաներով. Նրանց փականքով փակելու համար, իսկ յերթևեկման չափերից և բնույթից կախված մուտքի և ուրիշ ամենաշատ պատասխանատու լաքները պետք է փոխադարձ կախման մեջ դրվեն մուտքի և յելքի ազդանշանների հետ։ Բացի դրանից գնացքների անցնելու ժամանակ, պետք է փականքներով փակվեն հարևան գծերում գտնվող սլաքները, դուրս քաշման, նախապահպանող փակուղիների և ուրիշ սլաքները, վորոնք հնարավորություն են տալիս դուրս գալու գծի վրա, վորի վրայով գնացքն ընթանում է։

§ 149. Ձեռքի գործողության սլաքները բաժանվում են սլաքների, վորոնք պետք է փակվեն միայն նրանց վրայով, գնացքներ անցթողնելուց հետո, այդ մասին նշանակելով կայարանի տեխնիկական-կարգադրիչ ակտում և նրա քաղվածքում։

§ 150. Ինչպես ձեռքի, նույնպես և կենտրոնական գործողության յուրաքանչյուր սլաքային պահականոցում, շենքերում և նմանապես ավագ սլաքավարների շենքերում պետք է կայարանի պետի ստորագրությամբ կախված լինեն.

ա) Տեղնիկական-կարգադրիչ ակտից քաղվածքը տվյալ պահականոցին վերաբերվող տեղեկություններով.

բ) Սլաքավարների հերթապահությունների գրաֆիկը նրանց փոխման ժամերի ցուցմունքով.

գ) Սլաքային պահականոցի ինվենտարի ցանկը.

դ) Մուտքի պահականոցներում և ավագ սլաքա-



վարների շենքերում—քաղվածքներ գնացքների յերթևեկման չվացուցակից տվյալ կայարանի համար։

Բացի դրանից սլաքների և ազդանշանների սարքերով և ապարատներով պահականոցների շենքերում պետք է կախված լինեն.

ա) Գծերի, սլաքների և ազդանշանների դասավորման սխեմատիկ պլանը, վորոնք վերաբերվում են տվյալ պահականոցին.

բ) Մարշրուտների, սլաքների և ազդանշանների փոխադարձ շաղկապման աղյուսակը.

գ) Գործողությունների հետևողականության աղյուսակը կենտրոնացման և բլոկերովկայի ապարատների վրա։

§ 151. Յուրաքանչյուր սլաքային պահականոցի համար կայարանի պետի կողմից, կամ նրա կողմից լիազորված աշխատողի կողմից, տրվում են հետևյալ առարկաները.

ա) Բանալիներ պտուտմերները պտտելու համար.

բ) Մուրճ կոստիլները պնդացնելու համար.

գ) Յերկաթե քլունգ (բրիչ).

դ) Յերկաթե թի, փայտե թի, ցախավել.

յե) Ֆերակ, սլաքները ցեխից, սառույցից և ձնից մաքրելու համար.

զ) Սլաքային պնդացումների պաշար (յուրաքանչյուր պահականոցի համար հաշված 4-ական բոլտեր պտուտմերներով և 4-ական կոստիլներ).

է) Վագոններն ամրացնելու համար հարմարանքներ (այն պահականոցներում, վորոնք ցուցված են տեխնիկական-կարգադրիչ ակտում).

ը) Սափորներ (БИДОН) յուղի և նավթի համար.

թ) Ցեղնոցներ յուղելիքի համար.

ժ) Մկրատներ պատրույգները կտրելու համար.

ի) Ազդանշաններ, դրոշակներ, յերեսքաշի մեջ, ազդանշանային լապտեր և յեղջյուր։

Դրանից հետո մուտքի և յելքի սլաքները սպասարկող պահականոցների համար տրվում են.

ա) Ճայթուկներ (6-ից վոչ պակաս).

բ) Յերկու փոխադրական ապարատներ ձողերի վրա լապտերներով։

Ծանոթություն.—Հսկիչ պահականոցները, լոկոմոտիվները դեպոյից անցթողնելու և դեպոն ու ավագ սլաքավարների շենքերը պետք է մատակարարվեն ժամացույցներով։

§ 152. Փակ սլաքների և ազդանշանային լծակների բանալիները, մերդատար շենքի կամ պահականոցի դրսից ամրացրած, պահվում են կայարանի հերթապահի մոտ, իսկ ավագ սլաքավարների առկայության դեպքում—նրանց մոտ։ Իսկ այն կայարաններում, ուր այդպիսի կարգն անկարելի յե գործադրել սլաքների դասավորման և գնացքների յերթևեկման պայմաններով, բանալիները պահվում են պահականոցի սլաքավարի մոտ։

Կայարանները, վորտեղ բանալիների պահումն անհրաժեշտ է սահմանել սլաքային պահականոցում, վորոշվում են շահագործման բաժանմունքի պետի կողմից։

Այն կայարաններում, վորոնց մոտենում են գնացքների պոկման տեսակետից վտանգավոր կայարանքներ (перегонъ), վորտեղ գնացքի պոկված մասը կարող է ընթանալ գլխի մասի հետևից, և սլաքավարը



գլխի մասը կայարան անցթողնելուց հետո, հնարավորություն չի ունենա փոխադրել սլաքը պոչի մասը ուրիշ կայարանային գծի վրա թողնելու համար, այդպիսի սլաքի բանալիները պետք է պահվեն պահակատեղի սլաքավարի մոտ։

## Շարժական կազմի կանգառը կայարանի գծերում

§ 159. Գնացքների և շարժական կազմի տեղավորելը կայարանային ուղիներում պետք է կատարվի սլաքային ուղեփոխների մոտ, սահմանային սյունիկներով նշանակված սահմաններում։

Գնացքների և շարժական կազմի գծերում ճիշտ տեղավորման անմիջական հաստատումն, իսկ հարկ յեղած դեպքերում և սահմանային սյունիկներից դուրս յեկող շարժական կազմի ազդանշաններով պաշտպանելը դրվում է.

ա) Գնացքների նկատմամբ—լոկոմոտիվային և կոնդուկտորական բրիգադների վրա, վորոնք սպասարկում են գնացքի գլուխը (լոկոմոտիվի մեքենավարը) և պոչը (կոնդուկտորը, վորը սպասարկում է գնացքի պոչի վագոնը) և այն պահականոցների սլաքավարների վրա, վորոնց շրջանում գտնվում են գնացքի այդ մասերը,

բ) Միայնակ լոկոմոտիվների նկատմամբ—այդպիսիների մեքենավարների վրա և համապատասխան պահականոցի սլաքավարի վրա.

գ) Մանևրային և գնացքային կազմերի և վագոնների առանձին խմբերի նկատմամբ—կազմող բրիգադների վրա, վորոնք կատարում են շարժական կազ-

մի տեղավորումն և համապատասխան պահականոցների սլաքավարների վրա։

§ 160. Գծերում գնացքների և շարժական կազմի կանոնավոր տեղավորման ընդհանուր հսկողությունը դրվում է.

ա) Գնացքների նկատմամբ—գլխավոր կոնդուկտորների և համապատասխան շրջանների ավագ սլաքավարների վրա.

բ) Մանևրային և ուրիշ շարժական կազմի նկատմամբ—համապատասխան շրջանների ավագ սլաքավարների վրա։

Կայարանում ավագ սլաքավարի բացակայության դեպքում նրա պարտականությունները գնացքների և ամեն տեսակ շարժական կազմի կանոնավոր տեղավորման ընդհանուր հսկողության համար դրվում են անձամբ կայարանի հերթապահի վրա, կամ ուղիների հերթապահի վրա, որտեղ այդպիսինները կան։

Սլաքների և ազդանշանների կենտրոնացման կայարաններում վերևը թված ավագ սլաքավարների պարտականություններն անցնում են համապատասխան պահականոցների ազդանշանատուների վրա։

§ 161. Վագոնները կայարանի գծերում կանգառի համար տեղավորելիս, յեթե նրանց հետ մանևրային, կամ ուրիշ ոպերացիաները չեն կատարվում (նորոգություն, մաքրումն, ախտահանումն և նման բաներ) այդպիսի վագոնները կազմողների կողմից պետք է իրար հետ կցվեն, բոլոր, միասին, կամ առանձին խմբերով, արգելակվեն և ամրացվեն քշելուց. դատարկ վագոնների դռները և դռնակները պետք է փակ լինեն։

Մեկ վագոն, կամ մինչև 10 վագոն քանակությամբ վագոնների խումբ կայարանում գտնվելիս, այդ վագոնի տակ, կամ վերջին այդպիսի խմբի վագոններից մեկի տակ դրվում է շպալ-տակդիր։

Կայարանում 10 վագոնից ավելի քանակությամբ վագոնների խումբ գտնվելիս ամբողջ խմբի ծայրի վագոնների տակ դարսվում են մեկ-մեկ հատ շպալ-տակդիրներ։

Շպալ-տակդիրները պետք է դրված լինեն գծի լայնությամբ, վագոնների անիվների արանքում և անպայման կպչեն անիվների բանդաժներին (տես նկար 3, 43 յերեսի վրա)։

Վագոնների պնդացումը թույլատրվում է կատարել նույնպես սանդալներով (башмаки)։

Վագոնների մի քանի խմբի առկայության դեպքում, որոնք զանազան տեղերում լինեն կանգնած, թեպետ և մի գծի վրա, այդպիսի խմբերից յուրաքանչյուրը պետք է ամրացրած լինի վերևը ցուցված յեղանակով։

§ 162. Գնացքների կազմերը, որոնք պատրաստած են ուղարկման համար, կամ ժամանակները, որոնք սպասում են ձևափոխման, կամ լոկամոտիվի և կոնդուկտորական բրիգադի փոխման հորիզոնական գծերում, յեղանակի բարեհաջող պայմաններում նրանց կանգառման ժամանակ (§ 170), տակդիրներով չեն ամրացվում։ Իսկ գնացքային կազմերի (0,002-ից ավել) թեքված գծերում կանգնելու դեպքում ծայրի վագոնի տակ թեքվածքի կողմից պետք է դրվեն շպալներ-տակդիրներ։ Վագոնները, որոնք ունեն արգելակներ, բոլոր դեպքերում պետք է արգելակվեն։ Գնացքային կազմերի ամրացումն թեք գծերում դրվում է.

ա) Ուղարկման համար պատրաստված գնացքների կազմերի համար—գնացքը ձևավորող կազմող բրիգադի վրա.

բ) Ծայրի կայարանը, կամ լոկոմոտիվի փոխման կայարան ժամանած գնացքների կազմերի համար համապատասխան պահականոցների սլաքվարների վրա, ավագ սլաքավարների, կամ կայարանի հերթապահների հսկողության տակ։ Ժամանած կազմերում սպասարկվող արգելակավոր վագոնները պետք է արգելակվեն տվյալ գնացքի հետ ժամանած կոնդուկտորական բրիգադի կողմից։

§ 165. Մանևրային կազմերի համար, որոնք մանևրաներ անելիս դրված են կարճատև կանգառի՝ ընդգացումն չե պահանջվյում, բացի այն դեպքերը, յերբ մանևրանները կատարվում են թեքված գծերում և վագոնների ինքնակամ մեկնման վտանգ կա։

§ 167. Շարժական կազմով բռնող և նախապահպանող փակ ուղիները զբաղեցնելը արգելվում է։

§ 168. Պայթուցիկ թունավորող բեռներով և գազերով վագոնները գնացքից զատված, կամ գնացքում տեղավորելու համար պատրաստված, ինչպես նաև այդպիսի բեռներով պատրաստ կազմեր կայարանում նրանց կանգնելիս, պետք է տեղավորված լինեն այնպիսի գծերում, որտեղ նրանց կանգնելն ամենից շատ անվտանգ է.

Վագոնները պետք է կցված, արգելակված, սեպավորված և պաշտպանված լինեն կանգառի փոխադրական ազդանշաններով համաձայն ազդանշանների կանոնների։





Նկար 8.

ա) Ուղարկման համար պատրաստված գնացքների կազմերի համար—գնացքը ձևավորող կազմող բրիգադի վրա.

բ) Ծայրի կայարանը, կամ լոկոմոտիվի փոխման կայարան ժամանած գնացքների կազմերի համար համապատասխան պահակետների սլաքավարների վրա, ավագ սլաքավարների, կամ կայարանի հերթապահների հսկողության տակ։ Ժամանած կազմերում սպասարկվող արգելակավոր վագոնները պետք է արգելակվեն տվյալ գնացքի հետ ժամանած կոնդուկտորական բրիգադի կողմից։

§ 165. Մանևրային կազմերի համար, վորոնք մանևրաներ անելիս դրված են կարճատև կանգառի, պնդացումն չի պահանջվում, բացի այն դեպքերը, յերբ մանևրանները կատարվում են թեքված գծերում և վագոնների ինքնակամ մեկնման վտանգ կա։

§ 167. Շարժական կազմով բռնող և նախապահպանող փակ ուղիները զբաղեցնելը արգելվում է։

§ 168. Պայթուցիկ թունավորող բեռներով և գազերով վագոնները գնացքից զատված, կամ գնացքում տեղավորելու համար պատրաստված, ինչպես նաև այդպիսի բեռներով պատրաստ կազմեր կայարանում նրանց կանգնելիս, պետք է տեղավորված լինեն այնպիսի գծերում, վորտեղ նրանց կանգնելն ամենից շատ անվտանգ է.

Վագոնները պետք է կցված, արգելակված, սեպավորված և պատսպարված լինեն կանգառի փոխադրական ազդանշաններով համաձայն ազդանշանների կանոնների։





Նկար 8.

Սլաքները, վորոնք տանում են ցուցված բեռներով վագոնների կանգառի գծերի վրա, պետք է դըրված լինեն այնպիսի դրությամբ, վոր այդ գծի վրա յերթն անհնար լինի, և այդ դրությամբ ժամանակավորապես կարվեն կաստեղների վրա, կամ փակվեն փականքով, այդ սլաքների բանալիները պետք է գտնվեն կայարանի հերթապահի մոտ, վորը պարտավոր է անձամբ, իսկ այնտեղ, ուր կան ավագ սլաքավարներ, կամ գծերի հերթապահներ — վերջինների միջոցով ստուգել վագոնների կանգառի անվըտանգությունը, ինչպես նայև պատսպարելը և նրանց պահակով ապահովելը։ Վտանգավոր բեռներով և այդ բեռների հետ զանազան ոպերացիաների համար, վագոնների կանգառի համար առանձնացրած գծերը պետք է ցուցված լինեն կայարանի տեխնիկական-կարգադրիչ ակտում (գծերի նշանակման բաժնում) և նրա քաղվածքում։

§ 169. Հերթապահության մտնելիս կայարանի հերթապահներն ինչպես նաև ավագ և պահակատեղի սլաքավարները, վագոնների կազմողները և կցիչներն իրենց աշխատանքի շրջանների սահմաններում պարտավոր են ստուգել, ճի՞շտ են արդյոք տեղավորված և ամրացրած վագոնները, կայարանային ուղիներում։ Ցուցված ստուգումը կայարանի հերթապահը կատարում է փոքր կայարաններում, հերթապահության մըտնելիս անձամբ, իսկ մեծ գծային զարգացմամբ կայարաններում—իրեն ստորադրված աշխատողների միջոցով. գծերի հերթապահների և ավագ սլաքավարների միջոցով։ Ցուցված աշխատողների կողմից նույնպիսի ստուգում պետք է կատարվի յուրաքանչյուր շրջագայության դեպքում հերթապահության ժամանակ։

§ 170. Ուժեղ քամի բարձրանալու դեպքում, կամ նրա հնարավորության մասին նախազգուշացում ստանալիս, կայարանի հերթապահը պարտավոր է առանց հետաձգելու ստուգել գծերում վագոնների և գնացքային կազմերի կանգառի անվտանգությունը և տեղում նրանց հուսալի ամրացումը և համապատասխան աշխատողներին պնդել մանևրանները զգուշորեն կատարելու և ընդհատելու մանևրանները հրոցներով և ձեռքով։

Ավագ սլաքավարի, կամ ուղիների հերթապահի առկայության դեպքում անվտանգ դրության և վագոնների ամրացման ստուգումը կարող է հանձնարվել նրանց։ Սլաքավարները պարտավոր են, առանձին ցուցմունքներ չսպասելով, արագ կերպով պտտել իր պահականոցի շրջանը և վերացնել բոլոր այդ ժամանակ նկատած անսարքությունները վագոնների հուսալի պնդացման նկատմամբ։ Ճիշտ այդպես են վերաբերվում նաև վագոնների կազմողներն ու կցիչները, նրանց տրված մանևրաների համար կայարանի շըրջանի սահմաններում։

---

# ՄԱՆԵՎՐԱՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

## 1. Ընդհանուր կանոններ

§ 595. Մանևրաներ կոչվում են շարժական կազմի ամեն տեսակ տեղաշարժ, ինչպես կայարանի սահ-

մանևրներում, նույնպես և կայարանքներում (перегоны) փակուղիները և քարահանքերը սպասարկելիս։

§ 596. Շարժական կազմը, որը մասնակցում է մանևրաներում, կոչվում է մանևրային։

§ 597. Մանևրները կարող են կատարվել շոգեքարշներով, ջերմաքարշներով, էլեկտրաքարշներով, մոտոքարշներով, քարշողներով, մարդկանցով, ձիերով և ուրիշ նրանց նման կենդանիներով, վագոնների սեփական քաշով թեք ուղիներում (մանևրներ բլրակից) կամ մեխանիկական հարմարանքների օգնությամբ։

## 2. Մանևրային աշխատանքին կարգադրելու իրավունքը

§ 598. Մանևրներ կատարելու մասին, ընդհանուր ցուցմունքները և կարգադրությունները յելնում են կայարանի հերթապահից, կամ դրա համար հատուկ նշանակած աշխատանքից (ուղիների հերթապահի, իսկ այն կայարաններում, որտեղ մանևրների կենտրոնական ղեկավարություն է մտցրած,—կայարանային դիսպետչերից)։

Կայարաններում մանևրային աշխատանքներ կատարելու կարգի մասին դիսպետչերական հրամանատարությամբ, ինչպես նաև դիսպետչերի փոխհարաբերությունների մասին կայարանի հերթապահի, ուղիների հերթապահի, գնացքային դիսպետչերի, կազմող բրիգադների և սլաքավարների հետ մանրամասն ցուցմունքներ տրվում են տվյալ կայարանի տեղական հրահանգներում, տեղական պայմաններից կախված։



§ 599. Յուրաքանչյուր մանևրային լոկոմոտիվի համար նշանակվում են լոկոմոտիվային և կազմող բրիգադներ: Իսկ այն կայարաններում և քարահանքերում, որտեղ կազմողներ կցիչներ չկան, մանևրները հանձնարարվում են գլխավոր կոնդուկտորին. այդ դեպքում կցիչի պարտականությունները կատարում է կոնդուկտորներից մեկը, գլխավոր կոնդուկտորի նշանակմամբ։

§ 600. Կայարանի հերթապահը կարող է հանձնարարել վագոնների զատումը և կցումը պահակատեղի սլաքավարին։

§ 601. Մեծ մանևրային աշխատանքով կայարաններում կայարանի բոլոր ուղիները բաժանվում են մանևրային շրջանների։

Յուրաքանչյուր կազմող բրիգադի աշխատելու կարգը, նրա գործողության շրջանում սահմանվում է կայանի պետի կողմից։

Մանևրային կազմի անցումն ուրիշ կազմողի շրջանը կատարվում է վոչ այլ կերպ, քան վերջինի և ավագ սլաքավարների հետ համաձայնեցնելով։

§ 602. Մեծ աշխատանքով կայարաններում մանևրները կատարվում են մանևրային լոկոմոտիվներով, իսկ անհրաժեշտության դեպքում կայարանի հերթապահի կարգադրությամբ կարող են կատարվել նաև գնացքային լոկոմոտիվներով։

Երկնակի քարշով մանևրներ կատարելը չի թույլատրվում։

§ 603. Որպես կանոն, մանևրների ժամանակ սլաքները փոխադրվում են սլաքավարների կողմից, իսկ առանձին դեպքերում կայարանի հերթապահի,

ուղիների հերթապահի, կամ կայարանային դիսպետչերի կարգադրությամբ կարող են փոխադրվել կոնդուկտորների և կազմող բրիգադների կողմից։ Այն ճյուղավորություններում, որտեղ սլաքավարներ չկան, սլաքները փոխադրվում են կոնդուկտորների, կամ կազմող բրիգադների կողմից։

§ 604. Դեպոյի կամ արհեստանոցների գծերում մանևրաները կատարվում են դեպոյի, կամ արհեստանոցների աշխատողների ցուցմունքներով, իսկ կայարանի հերթապահը ուղարկում է միայն լոկոմոտիվը կազմող բրիգադի հետ (յերբ դեպոյի, կամ արհեստանոցների տրամադրության տակ չկա իր մանևրային լոկոմոտիվը)։

Յերկաթուղու ուրիշ սպասարկումների, վարչությունների և հիմնարկների ուղիներում կայարանի միջոցներով մանևրաներ կատարելը թույլատրվում է միայն այդ սպասարկումների, վարչությունների և հիմնարկների աշխատողների գիտությամբ և համաձայնությամբ։

§ 605. Առանձին լոկոմոտիվը, կամ մանևրա կատարող կազմը ուրիշ սպասարկումների, վարչությունների և հիմնարկների գծերից կայարանային գծերին անցնելիս պետք է կանգ առնի սահմանային սլաքի մոտ և նրա հետագա շարժումը կայարանային ուղիների վրա, կատարվում է կայարանի հերթապահի կարգադրությամբ, իսկ յերկաթուղու ուրիշ սպասարկումներին, վարչություններին և հիմնարկներին պատկանող գծերի վրա — այդ գծերին ղեկավարող աշխատողի կարգադրությամբ։



### 3. Մանևրաներ կատարելու կարգադրություն անող աշխատողի պարտականությունները

§ 606. Գնացքներ կազմողը, որը անմիջապես կարգադրում է մանևրաներին, պետք է մանևրաների դեպքում հնարավորության չափ բռնե այնպիսի դիրք, որպեսզի նրան միաժամանակ յերևկոն լոկոմոտիվը, մանևր կատարող կազմի պոչը և, կցիչը և մեքենավարի կողմից ձեռքի սուլիչի լսելիության տարածության վրա։ Կազմը հետ տալիս և նրա հնարավոր գծերի վրա, կամ վագոնների հեռանալու դեպքում դեպի կայարանքը (перегон) աշխատողը, որը կարգադրում է մանևրաներին, պետք է գտնվի մանևրային կազմի պոչի մասում, յեթե հնարավոր չէ լոկոմոտիվը դնել կայարանի (перегон) կողմից։

§ 607. Մանևրաներ կարգադրողը մանևրաների սկզբում և մանևրաներ կատարելու ժամանակ պարտավոր է.

ա) Համոզվել, որ մեքենավարը և նրա օգնականը յերկուսով գտնվում են լոկոմոտիվի վրա, իսկ սլաքավարները իրենց պահակատեղերումն են.

բ) Մեքենավարին տեղյակ պահել ինչում իսկապես կպարունակվեն տեղի ունենալիք մանևրաները.

գ) Համոզվել իրար հետ կցված են արդյոք բոլոր տեղաշարժման ենթակա վագոնները, խոչնդոտներ չըկան. վագոնների տեղի ունենալիք տեղաշարժի համար, ինչպես օրինակ՝ հանված են արդյոք նրանց տակից սանդալները (башмаки) կամ տակդիրները, բաց են թողնված արգելակները տեղաշարժման ենթակա շարժական կազմում, վագոնների տակ, կամ նրանց արանքում մարդիկ չկա՞ն, գծի մոտ չկա արդյոք անսարքին շարժական կազմ, կամ առարկաներ, որոնք կարող են խոչնդոտ հանդիսանալ ազատ տեղաշարժման համար և նրան նման բան։

գ) Հաստատ սահմանել վագոնների մոտ, վորոնց հետ կկատարվեն մանևրաններ, ինչպես նաև այն գծերի վրա, վորոնց վրա դուրս կձգվեն վագոններ և մանևրաններ կատարվող գծերին կից հարևան գծերում վոչ մի աշխատանք չի կատարվում.

դ) Համոզվել, վոր մուտքի և յելքի ազդանշանները փակ դրությամբ են և ստանալ կայարանի հերթապահի համաձայնությունը մեկնելիս գծերի վրա, վորոնց վրա, կամ վորոնցից սպասվում է գնացքների ընդունումն կամ ուղարկումն.

յե) Վագոնները գնացքներում տեղավորելուց առաջ զննել նրանց, ինչպես բեռնման ճշտության նկատմամբ, նույնպես և գնացքի կազմում տեղավորելու հնարավորության նկատմամբ.

զ) Բեռնման, բեռնաթափման աշխատանքներ կատարող աշխատողների հետ համաձայնեցնել վագոնների հետ մանևրաններ կատարելը, վորոնք գտնվում են բեռնման-բեռնաթափման ուղիներում.

է) Վագոնները հրոցներով դեն չձգել գծերի վրա, վորոնց վրա գտնվում են ուղևորական վագոններ, վագոններ—կշեռքի արհեստանոցներ, վագոններ—ռադիոկայաններ, վագոններ—գծեր չափողներ, վագոններ—մարդկանցով, վագոններ—լսարաններ, վագոններ—կենդանիներով և վտանգավոր բեռներով, ինչպես նաև ուրիշ բեռներով, վորոնք հրոցներից կարող են վնասվածք ստանալ և 0,002-ից ավելի թեքվածքներ ունեցող գծերի վրա.

ը) Չթույլ տալ մանևրային լոկոմոտիվների յերկարատև կացուրդներ սլաքների վրա, մանավանդ ձմեռը։



§ 608. Վտանգավոր բեռներով բեռնված վագոնների հետ մանևրանները պետք է կատարվեն առանձին կարգադրիչներով, առավելագույն նախազգուշացումներով, կայարանի հերթապահի, կամ գծերի հերթապահի անձնական հսկողության տակ, առանց հրոցների և սաստիկ կացուրդների։

§ 609. Մանևրանների դեպքում վագոնների կցումը կատարվում է մեկ մոտքաշով, իսկ մյուսը մինչև մերժումը պտտվում է և մնում կախված դրությամբ։

§ 610. Վագոնների կցումը և զատումը յերթևեկության ժամանակ, թույլատրվում են, բայց միայն 1 ժամում 3 կիլոմետրից վոչ ավել արագության դեպքում։

Սլաքների, խաչմերուկների տեղավորման տեղերում և գծանցներում, ինչպես նաև սառցաշերտի, ուժեղ մառախուղների, հեղեղի և ձնաթափների դեպքում, կցումը և զատումը գնալիս արգելվում են։ Նույնպես արգելվում է կցումը և զատումը գնալիս անսարքին վագոններով մանևրանների դեպքում, առանց բուֆետային բաժակների, կամ սալերի վագոններով, բեռնված պլատֆորմաներով, վորոնց վրա բեռը դուրս է գալիս լայնքսի կողքերից և դատարկ պլատֆորմաներով լայնքսի բաց կողքերով, նույնպես և չբարձրացրած անցման կամուրջիկներով մարդատար պարկի վագոնների կցումը։

Վագոնները կցելիս պետք է գտնվել կցման ճանկի գլխիկի կողքին և հսկել, վորպեսզի մարդատար վագոնի մոտ անցման կամուրջիկը բարձրացրած և արգելիչներով փակված լինի։

§ 611. Շարժվող վագոնների տակ (նրանց կանգնեցնելու համար) քարեր, փայտ, շպալներ, ռելսեր, ձողեր, ճղներ դնելը, ինչպես նաև ճաղերի արանքում որևէ ձողեր, ճղներ և դրան նման առարկաներ դնելը մանևրաների դեպքում արգելվում է, բացառությամբ այն դեպքերի, որոնք պահանջում են շտապ կացուրդ, որևէ ավարիաներից խուսափելու համար: Մանևրաները կարգադրող աշխատողը վագոնները կանգնեցնելու համար անհրաժեշտ դեպքերում պետք է գործադրե սանդալներ (башмаки), կամ հատուկ տակդիրներ, որի նպատակով յուրաքանչյուր մանևրային լոկոմոտիվին կից պետք է լինի յերկուական սանդալներ (башмаки): Տակդիրներով պետք է օգտվել մոտակա սլաքային պահականոցից:

### 4. Մանևրաներ կատարելու կարգը յեվ թույլատրելի արագությունը

§ 612. Մանևրաներ կատարելիս պետք է կատարվեն հետևյալ պայմանները.

1. Մանևրա կատարող լոկոմոտիվի յերթևեկումը կարող է կարգադրել միաժամանակ մեկ աշխատող, պատասխանատու մանևրաների ճիշտ կատարման համար: Այդ աշխատողին ստորադրվում են և նրա կարգադրությունները կատարում են.

ա) Լոկոմոտիվների մեքենավարները մանևրա կատարող կազմի յերթևեկման ուղղության և կարգի նկատմամբ.

բ) Կցիչները վագոնների զատման և կցման նկատմամբ և բոլոր կարգադրություններով, որոնք վերաբերվում են մանևրաներ կատարելուն.



գ) Սլաքավարները սլաքներով կանոնավոր գործողության նկատմամբ, սլաքների պատրաստ լինելու մասին պատասխան-ազդանշանների կանոնավոր մատուցման և բոլոր կարգադրություններով, որոնք վերաբերվում են մանևրաներ կատարելուն.

2. Մանևրաների ժամանակ արագությունը չպետք է լինի բարձր՝

ա) Մեկ ժամում 25 կիլոմետր ազատ և ուղիղ գծերով հետևից կցված վագոններով լոկոմոտիվների տեղաշարժությունների դեպքում.

բ) Մեկ ժամում 15 կիլոմետր վագոններով առջևից յերթևեկման դեպքում, սեփական գծով և հրոցներով մանևրաների դեպքում, ինչպես նաև սլաքներով կողքի ուղիների վրա յերթևեկելիս, անկախ նրանցից, թե լոկոմոտիվը, վո՞ր կողմիցն է գտնվում.

գ) Մեկ ժամում 15 կիլոմետր վտանգավոր բեռներով բեռնված վագոնների հետ, ինչպես նաև մարդկանցով վագոնների հետ մանևրաների ժամանակ.

դ) Մեկ ժամում 5 կիլոմետր կշեռքային ուղիներով, սայլանցներով և գծանցներով, ինչպես նաև մուտքի սլաքներով վագոններով առջևից, ձեռքի և ձիյերով մանևրաների դեպքում և յերբ վագոնները գտնվում են լոկոմոտիվի յերկու կողմերից:

յե) Մեկ ժամում 3 կիլոմետր՝ 30 կիլոմետրի վրա մինչև առանձին վագոններին, կամ վագոնների խմբերին մոտենալը:

3. Մանևրաները գծերում և սլաքներում, որոնցով սպասվում է գնացքի ժամանումը, կամ անցումը, ինչպես նաև կից գծերում ընդունման ուղիներով, որոնցից հնարավոր է մեկնել, կամ վագոնները դուրս

հրել ընդունման գծի վրա, պետք է ընդհատել մինչև մուտքի ազդանշանների բացման մոմենտը։

Դեպի կայարանները մոտեցումների անբարեհաջող պայմանների դեպքում (1 կիլոմետր և ավելի յերկարությամբ վայրէջքներ 0,004-ից մինչև 0,006 դիքության դեպքում և ամեն յերկարության վայրէջքնաևր 0,006-ից ավելի դիքությամբ), գնացքների յերթևեկության անվտանգությունն ապահովելու նպատակով մանևրանները ընդունման գծի վրա մեկնմամբ պետք է ընդհատվեն վոչ ուշ, քան ամեն տեսակ մարդկային գնացքի սպասվող սահմանումից 15 րոպե առաջ և ապրանքատար գնացքի ժամանից 10 րոպե առաջ։

Յեթե մոտեցման անբարեհաջող պրոֆիլի դեպքում, կայարանքով (перегон) գնացքի անցնելու համար կորցնում է 15 րոպեյից պակաս մարդկանց և 10 րոպեյից պակաս ապրանքատար գնացքների համար, այդ դեպքում մանևրանները գնացքի ընդունման գծի վրա մեկնելով պետք է ընդհատվեն.

ա) Միագիծ ուղեմասում գիծը գնացքին թույլ տալու մոմենտին.

բ) Յերկկգիծ ուղեմասում գնացքի ընդունման գծի վրա մեկնելուց առաջ կայարանի հերթապահը գնացքային հեռագրով, կամ հեռախոսագրով առաջարկում է գնացքների հարևան բաժանման կետին իրեն չուղարկել մինչև ազդարարությունը, իսկ բլոկիրովկայի դեպքում հեռացնում է բլոկ-սիստեմային միջոցով գնացքին ժամանում տալը։

Գնացքը կայարանից ուղարկելիս մանևրանները գլխավոր և ուղարկման գծերում, ինչպես նաև կից՝ ուղարկման գծով ուղարկվող գնացքի կողքի վրա



մեկնելը, կամ վագոնները նրան հանդեպ դուրս գցելը խուսափելու համար, պետք է ընդհատվեն վոչ ուշ, քան գնացքն ուղարկելուց 5 րոպե առաջ։

Մանևրանների ընդհատման ժամանակը պետք է ցուցված լինի կայարանի տեխնիկական-կարգադրիչ ակտում:

4. Գլխավոր գծերում, կամ նրանց համամաք մանևրաներ կատարելը, այլ նույնպես մանևրանների ժամանակ մուտքի սլաքներից մեկնելը, թույլատրվում է միայն մուտքի փակ ազդանշանների դեպքում և յուրաքանչյուր անգամ կայարանի հերթապահի թույլտվությամբ։

Դեպի մուտքն ազդանշանները գծերի 0,002-ից ավելի թեքմամբ կայարաններում, գլխավոր գծերի վրա, կամ նրանցից ուղիղ յելքով գծերի վրա մեկնելիս, լոկոմոտիվը պետք է թեքվածքի կողմից գտնվի։

Ցուցված դեպքում յելքի սլաքներից վագոններով առջևից դուրս գալ թույլատրվում է, վորպես բացառություն այն պայմանով, վոր վագոնների առաջ դարսվեն տակդիրային գլդոններ, կամ սանդալներ (башмаки) փորձելով արգելակները և սպասարկելով նրանց:

5. Յեթե պահանջվի գնացքը, կամ կազմը տեղափոխել մի ուղղության գծերից ուրիշ ուղղության գծերի վրա, կամ միջով այդ դեպքում այդպիսի տեղափոխությունը պետք է կատարվի կայարանի հերթապահի անձնական հսկողության տակ, կամ նրա կողմից լիազորված աշխատողի հսկողության տակ, (գծերի հերթապահի, գնացքները կազմողի, գլխավոր կոնդուկտորի, կամ ավագ սլաքավարի)։ Ըստ վորում

գծափոխվող գնացքի ամբողջ կոնդուկտորական բրիգադը պետք է գտնվի իր տեղում և մեքենավարի ազդանշաններով գործե արգելակներով։

6. Մանևրային կազմի ելքը կայարանի սահմաններից, այսինքն մուտքի ազդանշաններից, միագիծ ուղեմասերում, նույնպես՝ և երկկգիծ — ժամանման կողմը, այդպիսի ելքն անհրաժեշտության դեպքում կարող է թույլատրվել միայն հարևան կայարանի համաձայնությունը ստանալուց հետո, մեքենավարին գծային հեռագիր, հեռախոսագիր, կամ մական (жезл) տալով։ Իսկ երկկգծանի ուղեմասերում մանևրային կազմի ելքը կայարանի սահմաններից կանոնավոր գծով ուղարկման կողմը կատարվում է կայարանի հերթապահի կարգադրությամբ, առանց գրավոր թույլտվության, բայց ոչ հեռու, քան գնացքի կազմի երկարությամբ, որը սահմանված է տվյալ տեղամասում և այն պայմանով, որ այդ գծում բացակայե հանդիպական ուղղության գնացք։

7. Ամեն տեսակ կապի ընդհատման դեպքում, երբ կարելի յե սպասել գնացքի ժամանումն առանց որևէ ազդարարության, կայարաններում մանևրներ պետք է կատարվեն նախազգուշացումներով, որոնք գործադրվում են գնացքը հարևան կայարանից դուրս գալիս։

8. Վագոնի միաժամանակ շարժման առավելագույն քանակը մանևրների դեպքում պետք է համապատասխանե լոկոմոտիվի քարշի ուժին, հաշվի առնելով մանևրա կատարող կազմի արագ կցուրդը։

9. Որպես կանոն, լոկոմոտիվը մանևրների ժամանակ պետք է գտնվի շարժական վագոնների մի



կողմից. անհրաժեշտության դեպքում թույլատրվում է վագոնները տեղավորել միաժամանակ լոկոմոտիվի երկու կողմերից։

10. Վագոնների դասավորումը մանևրային կազմերում կարող է լինել կամայական, բացառությամբ այն դեպքերը, երբ շարժականների թվում կլինեն վտանգավոր բեռներով վագոններ։ Այդպիսի վագոնները մանևրների ժամանակ պետք է տեղավորվեն ոչ մոտ, քան լոկոմոտիվից 4 առնի հեռու լոկոմոտիվի ամեն տեսակ տաքացման դեպքում։

Վագոնների փոքր շարժումներ վտանգավոր բեռներով բեռնման և բեռնաթափման ճակատով թույլատրվում է կատարել ձեռքով։

11. Մարդկանցով զբաղված վագոնները պետք է շարժվեն առանձին զգուշությամբ և առանց հրոցների։ Նրանց մոտ կցման սարքերը պետք է պատած լինեն մինչև բուֆերային սալերին քսվելը։

Երկու ծայրերից վագոնների միաժամանակ մատուցումը մարդկանց գնացքներին արգելվում է։

Գնացքների հետ, որոնց մեջ կան մարդկանցով վագոններ, մանևրներ կատարելու, անհրաժեշտ է նախազգուշացնել նրանց, որպեսզի նրանք դուրս չգան վագոններից, ինչպես նաև, որպեսզի ապրանքատար պարկի վագոնների դռների մոտ չգտնվեն, որոնք սարքավորված են մարդկանց փոխադրելու համար։

12. Մանևրների ժամանակ գծի պաստառի միջով սայլանցները և գծանցները կարող են փակ լինել, բայց ոչ ավել, քան 10 րոպեյով. այդ ժամանակը լրանալուց հետո մանևրները ժամանակավո-

րապես ընդհատվում են մարդկանց և ավտո-սայլաշարն անց թողնելու համար, վորոնք սպասում են գծանցին և սայլանցին։

Գծանցները և սայլանցները զբաղեցնելիս կազմողը կամ կցիչը նրան օգնելու համար նշանակված, պետք է գնա ուղեմիջով, շարժվող վագոնների առջևից, լոկոմոտիվից նրան լավագույն կերպով տեսանելիության կողմից։

13. Ձեռքի, կամ կենտրոնացրած սլաքներով յերթևեկմամբ մանևրաներ կատարելիս շարժական կազմը շարժել չի կարելի, մինչև այն ժամանակ, քանի ազդանշանատույից, կամ սլաքավարից ազդանշան չըստացվի սլաքների պատրաստ լինելու մասին։

14. Վագոնները վագոնային կշեռքների վրա կշռելիս, լոկոմոտիվը չպետք է մտնի կշեռքի լաստակը, յեթե կշեռքը հարմարեցրած չէ իր վրայով լոկոմոտիվներ անցկացնելու համար։

15. Զվերջացրած բեռնմամբ և բեռնաթափմամբ վագոններով, մանևրաները կարող են թույլատրվել տեղաշարժման համար վոչ այլ կերպ, քան բեռնման-բեռնաթափման օպերացիաներին կարգադրող աշխատողի ներկայությամբ։

16. Նորոգության գծերում մանևրաներ կատարելիս գնացքների կազմողը պարտավոր է շրջել գծի վրա գտնվող բոլոր վագոնները և նախազգուշացնել աշխատողներին սպասվող մանևրաների մասին. յեթե անսարքին վագոնների թվում կան վագոններ, վորոնք կանգնած են բարձիչների (домкрад), կամ խաչկապների վրա, այդ դեպքում առաջը կանգնած վագոնների կցումը լոկոմոտիվին պետք է կատարվի



հնարավորության չափ զգուշությամբ, վորպեսզի չհրել բարձիչների, կամ խաչկապների վրա բարձրացրած վագոնները։

Կցման սարքեր չունեցող վագոնների հետ մանևրաները կատարվում են վագոնների նորոգման համար համապատասխան աշխատողի անձնական հսկողության տակ, վորն այդ նպատակով հրավիրվում է մանևրաներին կարգադրող աշխատողի կողմից, և այդպիսի վագոնների կցումը կատարվում է վագոնների սպասարկման աշխատողի կողմից։

Գիծը, վորի վրա գտնվում է շարժական կազմը, վորը նորոգվում է, կամ նորոգման յենթակա յէ, պետք է անջատված լինի սլաքների ուրիշ գծերի վրա հարկ յեղած դրմամբ և պատսպարիչ—ազդանշաններով։

17. Կայարանի սահմաններից դուրս բեռնման փակ ուղիներում և ճյուղավորություններում մանևրաներին հսկելը պահականոցի վարիչի պարտականությունն է, վորի համար նա պատասխանատու յէ, իսկ պահականոց չլինելու դեպքում—գլխավոր կոնդուկտորի պարտականությունն է։

## 5. Լեռնակային մանեվրաներ

§ Կայարաններում, վորոնք ունեն հատուկ թեք գծեր (լեռնակներ), իրենց սեփական քաշով տեսակավորման համար, մանևրաները կատարվում են այն կանոնների հիման վրա, վորոնք հրատարակվում են.

ա) ՀԾԺԿ-ի կողմից—մեքենայացրած ղեկավարմամբ սլաքներով և դանդաղիչներով լեռնակների համար.

բ) Ցերկաթուղիների պետի կողմից—ձեռքի ղեկավարմամբ սլաքներով և ձեռքի արգելակմամբ լեռնակների համար։

Լեռնակները, վորոնք սարքավորված են յերագիչներով (ускоридель) և դանդաղիչներով, կոչվում են մեքենայացրած, տարբերվելով այն լեռնակներից, վորոնց վրա վագոնների արգելակումը կատարվում ե սանդալներ (башмаки) դարսելու միջոցով։

1. Սանդալի (башмаки) վրա ընդունմամբ լեռնակից չպետք ե իջեցվեն.

ա) Վտանգավոր բեռներով բեռնված վագոնները.

բ) Մարդկանցով բեռնված վագոնները.

գ) Կենդանիներով բեռված վագոնները.

դ) Ապակյա անոթում խցած բեռներով վագոնները.

յե) Հեղուկ բեռներով վագոնները յերկու դըտիկոնով (ярус) բեռնված.

զ) Ռադիո-վագոնները և ելեքտրոկայանները, աուդիտորիաները, դինամոմետրիկական, գծերը չափող և կշեռքային-արհեստանոցները.

ժ) Լոկոմոտիվները պաղ դրությամբ.

ի) Ձվերով բեռնված վագոնները.

լ) Վագոնները, վորոնք հատուկ զգուշություն են պահանջում, որինակ. տեխնիկական տեսակետից անսարքինները, պլատֆորմաները այնքան թուլացած կապվածքով, վոր բեռը հրման ժամանակ կարող ե թափվել, ինչպես նաև մարդատար պարկի վագոնները։

2. Թույլատրվում ե վագոնների միայնակ իջնելը բեռնված հատ-հատ առարկաներով. (լոկոմոբիլներ,



կալսող մեքենաներ, թնդանոթներ, նեղածիր լոկոմոտիվներ և վագոններ և նման բաներ)։

3. Անվտանգ բեռներով ցիստերնաների իջեցնելը պետք ե կատարվի ավելի մեծ զգուշությամբ, քան թե ծածկած և բաց շարժական կազմի իջնելը։

## 5. Մանեվրաները հրոցներով

§ 614. Հրոցներով մանևրաները թույլատրվում են հետևյալ պայմանների կատարման դեպքում.

ա) Որվա լույս ժամանակը և լույս գիշերներին, ինչպես նաև այն ժամանակ, յերբ կայարանը լուսավորվում ե լույսի ուժեղ աղբյուրներով (ելեկտրականություն, նավթա-ատրադեկային).

բ) Վագոնների կանխական դասումն կողմից թույլատրվում ե 0,002-ից վոչ ավել թեքվածքով տափարակներում և գծերում այն հաշվով, վորպեսզի լոկոմոտիվի հրոցից զատված վագոնը և նրանց խումբը հասնեն միայն մինչև նրանց համար նշանակված կացուրդի տեղը.

գ) Միաժամանակ կարող ե հրվել վոչ ավել, քան 12 վագոնային սռնիներ.

դ) Լոկոմոտիվի մեքենավարը պետք ե տեղեկացրվի գծի մոտավոր յերկարության մասին, վորը պետք ե անցնեն վագոնները.

յե) Վագոնների կանգառը պետք ե կատարվի արգելակներով, կամ սանդալներով (башмаки)։

Հրոցներով մանևրաներն արգելվում են.

ա) Գծերում, վորոնք յելք ունեն (ինչպես հանդիպական, նույնպես և համուղի սլաքներով) գլխավոր գծերի վրա, նորոգության գծերի վրա և այն

գծերի վրա, վորտեղ կան վագոններ նորոգության, բեռնման, կամ բեռնաթափման տակ.

բ) Մառախուղների, ուժեղ քամիների, բուքերի, ինչպես նաև գիշեր ժամանակ.

գ) Վտանգավոր բեռներով բեռնված վագոններով.

դ) Մարդկանցով և կենդանիներով, ռադիոկայաններով, էլեկտրոկայարաններով, աուդիտորիաներով, գծեր չափող, կշեռքային արհեստանոցներով և դինամոմետրիկական վագոններով, ապակյա անոթի մեջ խցած հեղուկներով, բեռնված յերկու դատիկոնով և ձվերով, ինչպես նաև լոկոմոտիվներով պաղ դրությամբ։

Այնպիսի բեռներով վագոնները, վորոնց մանևրաների ժամանակ չի թույլատրվում իջեցնել լեռնակներից և շարժել հրոցներով, պետք է ցուցվեն մանևրաներ կատարող աշխատողին տրված կարգադրում.

### 7. Ձեռքով մանեվրաները

§ 615. Մարդկանց ձեռքով վագոնների ամեն տեսակ տեղաշարժությունները պետք է կատարվեն ձեռքով մանևրաներ կատարելու կանոններին միանգամայն ծանոթ աշխատողների հսկողության և ղեկավարության տակ։

Թույլատրվում է ինչպես միայնակ վագոնների, նույնպես և նրանց, իրար հետ կցված, խմբի ձեռքով տեղաշարժությունները, բայց քանակով վոչ ավել 4 բեռնված, կամ 8 դատարկ սռնիների և մեկ ժամում 4—5 կիլոմետրից վոչ բարձր արագությամբ։ Ձեռքով



մանևրաների համար նշանակված մարդիկ պետք է հաշված լինեն յերեք մարդուց վոչ պակաս, յերկու դատարկ սռնիների համար, կամ չորս մարդ յերկու բեռնված սռնիների համար։ Տեղաշարժություն կատարող աշխատողները պարտավոր են հավասարաչափ սեղմել վագոնների վրա, գտնվելով ռելսային ծայրից դուրս վագոնների կողքերին, բայց վոչ մի դեպքում նրանց առջևից վագոնները բուֆերային սալերի վրա սեղմելով հեռացնելը արգելվում է։ Վագոնների կանգառը պետք է կատարվի սանդալներով կամ հատուկ տակդիրներով։ .

Առանձին վագոնները տեղաշարժ անելիս նրանց միջև տարածությունը պետք է լինի 10 մետրից վոչ պակաս, իսկ խմբերով տեղաշարժվելիս—30 մետրից վոչ պակաս։

0,002-ից ավելի թեքմամբ ուղիներում, ինչպես նաև ուժեղ քամու ժամանակ ձեռքով մանևրաները չեն թույլատրվում:

Չի թույլատրվում մեկ վագոնների տեղաշարժությունը ուրիշների հանդեպ, բացի բեռնման և բեռնաթափման ճակատների մոտ տեղաշարժությունը։

---

## ՎԱԳՈՆՆԵՐԻ ԿՑՈՒՄՆ (ՊՏՈՒՏԱԿԱՎՈՐ ՅԵՎ ԻՆՔՆԱԿՑՈՒՄՆ)

### 1. Պտուտակավոր կցումն

§ 227. Գնացքներ կազմելիս վագոնների կցումն միմյանց հետ և լոկոմոտիվի հետ կատարվում է ստորև ցույցված կարգով:

Կցման պտուտակավոր սարքերը գործադրվում են հինգ տիպի, թված ստորև բերված աղյուսակում: Հիշյալ սարքերի կազմվածքները հնարավորություն են տալիս կատարել վագոնների կրկնակի միայնակ կցումներ։

**Շարժական կազմի կցման աղյուսակ**

| №№ ը/կ. | Մոտքաշ-ների տիպերը | Նորմալ | Ուլլեն-գուտի | Ուժեղաց-րած | 1916 թ. օրինակի | Միացրած |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Նորմալ | Միայնակ | Կրկնակի | Միայնակ | Միայնակ | Կրկնակի |
| 2 | Ուլլեն-գուտի | Կրկնակի | Կրկնակի | Միայնակ | Միայնակ | Կրկնակի |
| 3 | Ուժեղաց-րած | Միայնակ | Միայնակ | Միայնակ | Միայնակ | Կրկնակի |
| 4 | 1916 թվի օրինակի | Միայնակ | Միայնակ | Միայնակ | Կրկնակի | Կրկնակի |
| 5 | 1912 թվի միացրած | Կրկնակի | Կրկնակի | Կրկնակի | Կրկնակի | Կրկնակի |

§ 228. Ուժեղությամբ կցման սարքերը բաշխվում են հետևյալ կարգով (սկսած ամենաթույլից).




Նկ. 1. Նորմալ մոտքաշ։



1) Նորմալ, 2) ուլլենգուտի, 3) 1905 թ. ուժեղացրած օրինակի, 4) 1916 թ. օրինակի և 5) միացրած 1912 թ. օրինակի:




Նկ. 2. Ուլլենգուտի օրինակի մոտքաշ։




Նկ. 3. 1905 թ. օրինակի ուժեղացրած մոտքաշ։



Նկ 4. 1916 թ. օրինակի մոտքաշ։

Նկ. 5. 1912 թ. օրինակի միացրած մոտքաշ։



Նկ 6. Նորմալ մոտքաշ (փոքր ականջի արտաքին կողերի արանքում տարածությունը 140մմ. է, մեծ ականջի ներքին կողերի արանքում՝ 70 մմ է)։



Նկ. 7. Ուլլենդուսի մոտքաշ (փոքր ականջի արտաքին կողերի արանքում տարած. 140 մմ է, մեծ ականջի ներքին կողերի արանքում՝ 152 մմ է)։



Նկ. 8. Ուժեղացրած մոտքաշ (փոքր ականջի արտաքին կողերի արանքում տարածությունը 164 մմ. է, մեծ ականջի ներքին կողերի արանքում՝ 74 մմ. է)։



§ 229. Գնացքային կազմերը կցելիս գործադրըվում է հետևյալ կարգը․

1. Միևնույն տիպի կցման սարքերի դեպքում, աշխատող մոտքաշ կարող է լինել գնացքի ընթացմամբ ամեն վագոնի մոտքաշը, իսկ զանազան տիպերի դեպքում—ավելի ուժեղը։



Նկ. 9 1916 մոտքաշ (փոքր ականջի արտաքին կողերի արանքում տարածությունը 124 մմ. է, մեծ ականջի ներքին կողերի արանքում տարածությունը 13 մմ. է)։



Նկ. 10. Միացրած մոտքաշ (փոքր ականջի արտաքին կողերի արանքում տարածությունը 164 մմ. է, մեծ ականջի արտաքին կողերի արանքում տարածությունը 170 մմ. է)։

2. Կցումն կատարվում է ավելի ուժեղ տիպի մոտքաշով, ըստ որում ազատ (կցմանը չմասնակցող) մոտքաշը պտտեցվում է մինչև միրժումը և մնում է կախված դրությամբ:

3. Կրկնակի կցման դեպքում վագոնները սկզբում կցվում են այն մոտքաշով, որը պետք է աշխատող լինի, իսկ, հետո յերկրորդ (չաշխատող), մոտքաշի կարճ ականջն անց է կացվում աշխատող մոտքաշի ողերի մեջ և նստվում է հարևան վագոնի ճանկի վրա: Այսպիսի կցման դեպքում յերկրորդ մոտքաշը հանդիսանում է, որպես պահեստի և սկսում է աշխատել միմիայն առաջին մոտքաշի պոկվելու դեպքում:

4. Բոլոր դեպքերում լոկոմոտիվի կցումը կազմի հետ չպետք է լինի կրկնակի, ըստ որում աշխատող պետք է լինեն տենդերի, կամ լոկոմոտիվի մոտքաշները: Շեղումն թույլատրվում է միմիայն վերջինների պոկվելու դեպքերում:



Նկ. 11. Նորմալ մոտքաշի կցումն նորմալի հետ:

5. Ապրանքատար վագոնները կցելիս աշխատող մոտքաշները պտտեցվում են մինչև բուֆերային սա-



լերին շոշափելը, թեթև իրար վրա սեղմելով, որ ձեռք է բերվում մոտքաշի պտուտակի մեկ պտույտով բուֆերային սալերի շփվելուց հետո:

6. Մարդատար վագոնները կցելիս հարևան վագոնների բուֆերները պետք է իրար վրա սեղված լինեն այնպես, որպեսզի բուֆերային սալերը գնացքի ընթանալու ժամանակ իրարից չբաժանվեն, որ ձեռք է բերվում մոտքաշի պտուտակի յերկու յերեք պտույտներով բուֆերային սալերի շփվելուց հետո:



Նկ. 12. Նորմալ մոտքաշի կցումը ուլենդուտի մոտքաշի հետ:



Նկ. 13. Նորմալ մոտքաշի կցումը ուժեղացրածի հետ:

7. Ապրանքատար պարկի վագոնների կցման դեպքում, վորոնք տեղավորված են մարդատար և մարդատար-ապրանքատար գնացքներում, մարդատար պարկի վագոնների առջևից (գնացքի գլխում), նրանց բուֆերները պետք է իրար վրա սեղմված լինեն, ինչպես նաև մարդատար պարկի վագոններում, իսկ ապրանքատար վագոնների բուֆերները, վորոնք տեղավորված են մարդատար պարկի վագոնների հետևից, (պոչի մասում) ինչպես ապրանքատար գնացքներում։




Նկ. 14. Նորմալ մոտքաշի կցումը 1916 թ. մոտքաշի հետ։




Նկ. 15. Նորմալ մոտքաշի կցումը միացրածի հետ։



8. Անպայման արգելվում է չաշխատող մոտքաշի ականջը դնել նրա լծասարքի ճանկի խոռացման մեջ, իսկ նրա վերևից դնել աշխատող մոտքաշի ականջը, (Նկ. 26) վորովհետև այդ ձևով կցման դեպքում կարող է առաջ գալ գնացքի ինքնազատումը, կամ լծասարքի ճանկի բեկվածք։




Նկ. 16. Ուլլենգուտի մոտքաշների կցումը միմյանց հետ։




Նկ. 17. Ուլլենգուտի մոտքաշի կցումն ուժեղացրածի հետ։

9. Մոտքաշի սարքերի ինքնազատումը խուսափելու համար հարկավոր է հանել, վորպեսզի մոտքաշի

պտտուտակն իր վրա մի ծայրով չհենվի ճանկի գլխի-կին (Նկ. 27)։

Չի թույլատրվում նույնպես կատարել կցումը ազատ մոտքաշը նետելով աշխատողի վերևից (Նկ. 28)։

10. Վագոնների կցման ճշտության մեջ կասկածելիս այն դեպքում, երբ կայարանում բացակայում է վագոնային սպասարկման աշխատողը (գնացքների զննողը), կայարանի հերթապահը և գլխավոր կոնդուկտորը վիճելի հարցը լուծելու համար պետք է մեջ քաշեն գնացքի մեքենավարին։




Նկ. 18. Ուլլենդուստի մոտքաշի կցումը 1916 թվի մոտքաշի հետ։




Նկ. 19. Ուլլենդուստի մոտքաշի կցումը միացրածի հետ.



11. Իրար հետ կցվող վագոնների մեջ բուֆերային կենտրոնների բարձրությունը հնարավորության չափ պետք է միատեսակ լինի. նրանց տարբերությունը 100 միլիմետրից ավել չպետք է լինի։




Նկ. 20 Ուժեղացրած մոտքաշի կցումը ուժեղացրածի հետ։




Նկ. 21. Ուժեղացրած մոտքաշի կցումը 1916 թվի մոտքաշի հետ։

12. Պլատֆորմաները, ընդհանուր բեռան տակ միացվող (շղթայով) պետք է իրար հետ միացվեն կրկնակի կցմամբ։

§ 230. Եթե կցվող վագոններն ունեն ավտոմա-

տիկ արգելակների միջանցիկ փողրակները, շոգիի տաքացման փողրակներ, էլեկտրական լուսավորության լարեր, ռադիո և հեռախոսային սարքվածքներ, այդ դեպքում սկզբում կատարվում է վագոնների կցումը, իսկ հետո ցուցված խողովակների և լարերի միացումը։




Նկ. 22. Ուժեղացրած մոտքաշի կցումը միացրածի հետ։




Նկ. 23. 1916 թվի մոտքաշների կցումը իրար հետ։




Նկ. 24. 1916 թ. մոտքաշի կցումը միացրածի հետ։




Նկ. 25. 1912 թվի միացրած մոտքաշների կցումը։



Նկ. 26. Ազատ մոտքաշի ճանկի նետելը աշխատող մոտքաշի ականջի տակ։

Իսկ վագոնների զատման ժամանակ, ընդհակառակը, սկզբում անջատվում են ցուցված խողովակները և լարերը, իսկ հետո արդեն կատարվում է կցման սարքերի անջատումը։



Նկ. 27. Աշխատող մուֆտայի պտուտակը հենվում է ճանկի գլխիկում, ազատ մուֆտայի պտուտակը բացված է։



Նկ. 28. Ազատ մուֆտայի նետումը վերև նորմալ և ուժեղացրած մուֆտաների կցման ժամանակ։

§ 231. Գնացքի կազմերի և վագոնների կանոնավոր կցման պատասխանատվությունը կազմման, կամ սկզբնական ուղարկման կայարաններում, ինչպես



նաև գնացքի ընթացման ուղիում զատումների և կցումների դեպքում դրվում է կայարանային յենթական աշխատողների (կազմիչ բրիգադներ, գնացքների տեխնիկական զննիչներ, գծերի հերթապահներ և կայարանի հերթապահներ) և գլխավոր կոնդուկտորի վրա կազմի հետ լոկոմոտիվի կցման կանոնավորության համար պատասխանատվությունը բոլոր դեպքերում դրվում է գնացքի մեքենավարի և գլխավոր կոնդուկտորի վրա։ Գնացքների սկզբնական ուղարկման կայարաններում, ինչպես նաև լոկոմոտիվների փոխման կայարաններում, լոկոմոտիվի կցումը և անջատումը կատարվում են սլաքավարների և կազմիչ բրիգադների կողմից։

## 2. ԻՆՔՆԱԿՑՈՒՄԸ

§ 232. Շարժական կազմի կցումը, որը սարքավորված է ինքնակցմամբ, կատարվում է ավտոմատիկ կերպով շարժական կազմի միավորների փոխադարձ



Նկ. 1. Ինքնակցումը ԻՐՏ—3-ը կցման մոմենտին (տեսքը վերևից)։

անջատելուց ըստ վորում միացման մոմենտին արագությունը մեկ ժամում 3 կիլոմետրից ավել չպետք է լինի, այսինքն մանյովրաների ժամանակ վագոններին մոտենալու համար սահմանվածը (Նկ. 1)։

Զատումն կատարվում է ուժարով կոթի օգնությամբ, վորը գտնվում է վագոնի կողքին, առանց կցիչի վագոնների արանքը մտնելու։ Կոթը մինչև մերժումը պտտելով, պետք է նրան բաց թողնել այն հաշվով, վորպեսզի նա վերադառնա նախկին դրությանը (Նկ. 2)։



Նկ. 2. Վագոնների զատումն։

Համոզվել, վոր կցումը կատարվել է, կարելի յե փականքների ստիկների դրությամբ, վորոնք ներկված են կարմիր գույնի։ Յեթե փականքների ստիկ-



ներից մեկը գլխով դուրս է գալիս ցած, այդ դեպքում ինքնակցումները զատվում են։ Կցված ինքնակցումների դեպքում փականքի յերկու ստիկները չեն յերևում։ Վագոնները գնալիս դեն գցելու համար բավական է հարկավոր տեղում սարքերը զատել և հետո, լոկոմոտիվով սեղմելով, առանց հրոցների կատարել համապատասխան ցիրուցան։

Յեթե հարկավոր է, վորպեսզի կցումն չկատարվի, (հրելիս և այլն). անհրաժեշտ է կատարել կանխական զատումն կոթը մինչև մերժումը պտտելով և հետո, կոթը չթողնելով, ամրացնել նրան այդ դրությամբ (կոթի մոտ), վորի համար հարկավոր է զատման գլանը (вал) նրա տափակ մասով դնել հատուկ դարակի վրա, վորը կա զատման գլանի (вал) արտաքին բարձակի վրա։



Նկ. 3. Ինքնակցման կցումը պտուտակային մոտքաշով սարքավորված վագոնի ճանկի հետ։

§ 233. Ինչպես գնացքներում, նույնպես և մանյովրաներում, անցման ժամանակաշրջանում վագոն-

ների կցումը, որոնք սարքավորված են պտուտակային լծասարքով, ինքնակցմամբ սարքավորված վագոններով, կարող է լինել ամենից շատ հաճախ։

Այդ կցումն անցման ժամանակաընթացքում իրականացնելու համար, մինչև բոլոր վագոններն ինքնակցումներով սարքավորված չլինեն, վերջինների վրա կախվում են անցման հարմարանքներ, որոնք ծառայում են ինքնակցումն ինքնակցությամբ չսարքավորված վագոնի ճանկի հետ միացնելու համար։

Այդպիսի միացումը հնարավոր դարձնելու համար բոլոր վագոններում և լոկոմոտիվներում ամբողջ անցման ժամանակի համար պահվում են բուֆերներ։

Շարժական կազմի ինքնակցմամբ միացվող բուֆերների արանքում պետք է լինի 50—70 միլիմետր բացատ կանոնավոր կցումը և թեք տեղերում ազատ անցումն հնարավոր դարձնելու համար։

Վերևը ցուցված հարմարանքը, կախված ինքնակցման գլխում, տրվում է պտուտակային լծասարքով վագոնի, կամ լոկոմոտիվի ճանկի վրա և գնացքն ընթանում է միայնակ կցմամբ, կրճատելով, որքան հնարավոր է, տարածությունը բուֆերների արանքում (նկ. 3. յերես 79)։

Պտուտակային մոտքաշն ինքնացման գլխի մանյակի վրա դցելն արգելվում է։

Տարբերությունն ինքնակցման գլխիկների սռնիների արանքում իրար հետ միացվող շարժականկազմում 100 միլիմետրից ավել չպետք է լինի։

§ 234. Ինքնակցման և կլանող ապարատի մեխանիզմները չպետք է յուղվեն։

---

# ՔԱՂՎԱԾՔ

ՀԺԺԿ-ի 1934 թ. հրատարակած յերկաթուղիների տեխնիկական շահագործման կանոնների լրացումներից ավագ և շարքային սպասավորների հրահանգին Անդրկովկասյան յերկաթուղիների համար ըստ տեղական պայմանների։

| ՏԾԿ §§ | Լրացումներ | Լրացումների բովանդակությունը |
|---|---|---|
| 162 | 1 | 1. Ինքնաարգելակմամբ, կամ խառն արգելակմամբ ընթացող գնացքի հանձնման դեպքում, գնացքների հանձնման կայարաններում և շոգեքարշները տեխնիկական կարիքների համար գնացքային կազմից զատելիս և կայարաններում մանյովրաներ անելիս, նմանապես և կայարաններում (перегон), գնացքը կանգնեցնելիս, կոնդուկտորական բրիգադը պարտավոր է գնացքի կազմն արգելակել ձեռքի արգելակներով։<br>2. Կայարանային գործակալները, որոնք մասնակից են գնացքների յերթևեկմանը, պարտավոր է հսկել, որպեսզի գնացքների կազմերը, որոնք թողնվում են կայարանային ուղիներում առանց շոգեքարշների ան- |

| ՏԾԿ §§ | Լրացումներ | Լրացումների բովանդակություն |
|---|---|---|
| | | պայման արգելակված լինեն ձեռքի արգելակներով։ |
| 598 | 1 | Կայարաններում, որտեղ հատուկ մանյովրային շոգեքարշներ չկան, մանյովրային աշխատանք կատարելը պետք է հանձնվի անմիջապես այն գնացքի գլխավոր կոնդուկտորին, որի հետ պետք է կատարվի այդ աշխատանքը։ Կայարանային գործակալները, ինչպես նաև գնացքային բրիգադի գործակալները, որոնք մասնակցում են մանյովրային աշխատանքին ղեկավարվում են միայն կարգադրություններով տրված անմիջապես գլխավոր կոնդուկտորից, որը ղեկավարում է մանյովրային աշխատանքին։ Կայարանի հերթապահի բոլոր կարգադրությունները, որոնք առաջ են գալիս մանյովրային աշխատանքի պրոցեսում վերջինների խնդիրներով, պետք է հանձնվեն գլխավոր կոնդուկտորին, որը ղեկավարում է մանյովրային աշխատանքին, և ոչ թե ուրիշ գործակալներին, որոնք այս, կամ մասնակցություն են ցույց տալիս այդ աշխատանքում։ |



| ՏԾԿ §§ | Լրացումներ | Լրացումների բովանդակություն |
|---|---|---|
| 602 | 1 | Թույլատրվում է մանյովրաներ կատարել նաև հրող լոկոմոտիվով այն գնացքի հետ, որի հետ նա ժամանել է և որի հետ կնթանա առաջ։ Յեթե գնացքի հետ մանյովրաները կկատարվեն գնացքային լոկոմոտիվով, այդ դեպքում կայարանի հերթապահը անձամբ, կամ գլխավոր կոնդուկտորի միջոցով պարտավոր է մանյովրաների սկզբում նախազգուշացնել հրող շոգեքարշի մեքենավարին, կամ վերջինը փոխադրել ազատ գիծը։ |
| 612 | 1 | Սաորև թված կայարաններում դեպի որոնց մերձեցումները գտնվում են ձգձգվող թեքվածքներում, սահմանային պրոֆիլով, մանյովրաները պետք է ընդհատվեն ամեն տեսակ գնացքների ժամանելուց 15 րոպե առաջ, որոնք մտնում են թեքվածքի կողմից։<br><br>ԳԼԽԱՎՈՐ ԳԻԾԸ<br><br>Շորապան—Ձիրուլի կողմից<br>Ձիրուլի—Խարգոուլի »<br>Խարգոուլի—Մարելիսի »<br>Մարելիսի—Մոլիտայի »<br>Մոլիտա—Ցիպայի »<br>Ցիպա—Լիխիի » |

| ՏՇԿ §§ | Լրացում-ներ | Լրացումների բովանդակություն | |
|---|---|---|---|
| | | Լիխի—Ցիպայի | կողմից |
| | | Կավթիսխևի—Կասպիի | » |
| | | Ավճալի—Մցխեթի | » |
| | | Թիֆլիս—Նավթլուղի | » |
| | | Նավթլուղ—Թիֆլիսի | » |
| | | Վելի—Նավթլուղի | » |
| | | Գարդաբանի—Վելի | » |
| | | Փոյլի—Շաքաուլի | » |
| | | Շաքաոլի—Աղստաֆայի | » |
| | | Աղստաֆա—Թաթլույի | » |
| | | Կովլյար—Թաուզի | » |
| | | Ալաբաշլի—Գյանջայի | » |
| | | Մինգեչաուր—Գերանի | » |
| | | Հաջիկաբուլ—Փիրսաղաթի | » |
| | | Կիշլի—Բալաջարիի | » |
| | | Բալաջարի—Խուրդաղանի | » |
| | | Կիզիլ-բուր—Սիազանի | » |
| | | Կալամա—Լեջետի | » |
| | | Սամուր—Բելիջիի | » |
| | | Բելիջի—Սամուրի | » |
| | | **ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿԻԹ** | |
| | | Սողանլուղ—Կումիսի | » |
| | | Սանդար—Կումիսի | » |
| | | Սաղախլո—Այրումի | » |
| | | Ախտալա—Հաղպատի | » |
| | | Ալլավերդի—Սանահինի | » |



| ՏՇԿ §§ | Լրացում-ներ | Լրացումների բովանդակություն | |
|---|---|---|---|
| | | Սանահին—Քոբերի | » |
| | | Քոբեր—Քոլագերանի | » |
| | | Քոլագերան—Շահալի | » |
| | | Շահալի—Բամբակի | » |
| | | Բամբակ—Ղարաքիլիսի | » |
| | | Ղարաքիլիս—Արճութի | » |
| | | Արճութ—Համամլիի | » |
| | | Համամլի—Նալբանդի | » |
| | | Նալբանդ—Կալթախչիի | » |
| | | Կալթախչի—Ջաջուռի | » |
| | | Որթաքիլիսա—Ջաջուռի | » |
| | | Լենինական—Որթաքիլիսայի | » |
| | | Անի—Աղինի | » |
| | | Ալագյոզ—Անիի | » |
| | | Կարաբուրուն—Ալագյոզի | » |
| | | Մաստարա—Կարաբուրունի | » |
| | | Արաքս—Մաստարայի | » |
| | | Ղամարլու—Արարատի | » |
| | | Ուլուխանլու—Յերևանի | » |
| | | Արփաչայ—Լենինականի | » |
| | | **ԿԱԽԵԹԻԱՅԻ ՃՅՈՒՂԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ** | |
| | | Վազիանի—Իորայի | » |
| | | Բաղիաուրի—Սագարեջոյի | » |
| | | Մելաանի—Գուրջիանիի | » |
| | | Գուրջանի—Մելանի | » |

| ՏՇԿ §§ | Լրացումներ | Լրացումների բովանդակություն |
| --- | --- | --- |
| | | Մուկուզանի—Շրոմայի » |
| | | Կարդանախի—Գուրջաանի » |
| | | **ՏԿՎԻԲՈՒԼԻԻ ՃՅՈՒՂԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ** |
| | | Ռիոն—Քութայիսի » |
| | | Քութայիսի—Գելայի » |
| | | Գելաթի—Քութայիսի » |
| | | Խրեսիլի—Սածիրիի » |
| | | **ՃԻԱԹՈՒՐԱՅԻ ՃՅՈՒՂԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ** |
| | | Շորապան—Մարգոտուբանիի » |
| | | Բուղեի—Ռկվիայի » |
| | | Ռկվիա—Սալիյեթի » |
| | | Ճիաթուրա—Դարկվեթի » |
| | | Դարկվեթի—Սաչխերիի » |
| | | **ԲԱԿՈՒՐԻԱՆԻ ՃՅՈՒՂԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ** |
| | | Բորժոմ—Դաբայի » |
| | | Ծաղվերի—Ցեմիի » |
| | | Ցեմի—Լիբանիի » |
| | | Լիբանի—Սակոճակոյի » |
| | | Սակոճակո—Բակուրիանիի » |
| | | Դ-ի փոխարեն Պապիտաշվիլի |

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Г. Пуб.л.Библиотека
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникяна

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՀՐԱՀԱՆԳ ԱՎԱԳ ՅԵՎ ՇԱՐՔԱՅԻՆ ՍԼԱՔԱՎԱՐՆԵՐԻ

Սլաքավարների պաշտոնի նշանակությունը . . . 3
Պայմաններ, վորոնց պետք է բավարարեն սլաքավարների պաշտոնին նշանակվող աշխատողները . . . 4
Ծառայության նշանակելու, տեղափոխելու և ծառայությունից հեռացնելու կարգը . . . 5
Ստորագրվելու կարգը . . . 6
Ընդհանուր պարտականություններն ավագ և շարքային սլաքավարների համար . . . 7
Սլաքավարի պարտականությունները սլաքների պահպանման և սպասարկման համար . . . 11
Սլաքավարների պարտականությունները գնացքներն ընդունելիս, ուղարկելիս և անցկացնելիս . . . 16
Սլաքավարների պարտականությունները գնացքներն ուղեկցողի հետ ընդունելու համար . . 23
Սլաքավարի պարտականությունները գնացքային լոկոմոտիվներին, վորպես ուղեկցող ուղեկցելու համար . . . 24
Սլաքավարի պարտականությունները մանյովրաներ կատարելիս . . . 24
Սլաքավարի պարտականություններն ավարիաների դեպքում . . . 27

Սլաքավարի պարտականությունները անձնական նախազգուշացման միջոցների պահպանման համար . . . . . . . . . . . . . . . . . . 27
Ավագ սլաքավարի պարտականությունները . . . 29
Ավագ սլաքավարի իրավունքները . . . . . . . . 31
Սլաքավարի պատասխանատվությունը . . . . . . 31
Քաղվածքներ յերկաթուղիների տեխնիկական շահագործման կանոններից . . . . . . . . . 33
Սլաքային ուղեփոխները . . . . . . . . . . . . . 33
Մանյովրաներ կատարելու կանոնները . . . . . . 45
Վագոնների կցումը (պտուտակավոր և ինքնակցումը) . . . . . . . . . . . . . . . . . 63
Քաղվածքներ ՀՃԺԿ-ի 1934 թ. հրատարակած յերկաթուղիների տեխնիկական շահագործման կանոնների լրացումներից ավագ և շարքային սլաքավարների հրահանգին Անդրկովկասյան յերկաթուղիների համար ըստ տեղական պայմանների . . . . . . . . . . 81

ՀՀ Ազգային գրադարան
NL0296081

24.449

Գին

5 ... 958

# ИНСТРУКЦИЯ
## старшему и рядовому стрелочникам

Управ. Зак Жел. Дор.